Գիտություն

ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ
№7-8
(409)
2026 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ակադեմիա) Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ժողկոմխորհի 1943 թվականի նոյեմբերի 10-ի N 702 որոշմամբ ստեղծված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի իրավահաջորդը հանդիսացող՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է:

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ակադեմիա) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս կառավարության, հիմնադրած ինքնակառավարվող իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կազմակերպական-իրավական ձևի և կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) և սույն կանոնադրությամբ: Ակադեմիան իր կազմում միավորում է ակադեմիայի անդամներին՝ ակադեմիկոսներին ու ասոցացված անդամներին, ակադեմիայի գիտական բաժանմունքները, ակադեմիայի աշխատակազմը, ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամներին և հանրային գիտական կազմակերպությունների պատվավոր գլխավոր ու պատվավոր առաջատար գիտաշխատողներին:

3. Ակադեմիան իր գործունեությունն իրականացնում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, օրենքի, այլ իրավական ակտերի ու սույն կանոնադրության:

4. Ակադեմիայի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

5. Ակադեմիայի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ ՀՀ ԳԱԱ.

3) ռուսերեն լրիվ՝ Некоммерческая организация «Национальная академия наук Республики Армения».

4) ռուսերեն կրճատ՝ НАН РА.

5) անգլերեն լրիվ՝ «National Academy of Sciences of Republic of Armenia» Non-Commercial Organization.

6) անգլերեն կրճատ՝ NAS RA:

6. Ակադեմիայի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24:

2. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

7. Ակադեմիան շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, համարվում է ստեղծված պետական գրանցման պահից և գործում է անժամկետ:

8. Ակադեմիան Հայաստանի Հանրապետությունում ու նրանից դուրս կարող է ունենալ և ստեղծել հիմնադրամներ, փակ բաժնետիրական ընկերություններ, մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են ակադեմիայի նախագահության կողմից հաստատված կանոնադրությունների համաձայն:

9. Ակադեմիան ունի հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

10. Ակադեմիան իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության բանկերում, ինչպես նաև այլ պետությունների բանկերում՝ արտերկրում ներկայացուցչություններ կամ մասնաճյուղեր ստեղծելու պարագայում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով: Ակադեմիան և նրա հիմնադրած իրավաբանական անձն իրավունք ունեն բացելու հաշիվներ նաև պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում:

11. Ակադեմիայի գործունեության ընթացքում ստացված ամբողջ եկամուտը պետք է օգտագործվի նրա կանոնադրական խնդիրների լուծման համար:

12. Ակադեմիան իր կանոնադրության համաձայն՝

1) անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում է հիմնադրի կողմից ակադեմիային տրամադրված գույքը.

2) տնօրինում, օգտագործում և տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

13. Ակադեմիան կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով), դրոշմակնիք ու ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

14. Ակադեմիայի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում ակադեմիայի պարտավորությունների, իսկ ակադեմիան՝ հիմնադրի պարտավորությունների համար: Ակադեմիան իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

3. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

16. Ակադեմիայի գործունեության հիմնական նպատակն է՝

1) նպաստել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գիտական ու գիտատեխնիկական հետազոտությունների բարձր որակի ապահովմանը.

2) նպաստել Հայաստանի տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական ու մշակութային զարգացմանը, ազգային անվտանգության ամրապնդմանը.

3) տրամադրել պետությանն ու հասարակությանը գիտական, փորձագիտական խորհրդատվություն, զարգացնել միջազգային գիտական համագործակցությունը, նպաստել գիտական արդյունքների հանրահռչակմանը:

17. Ակադեմիայի առաքելությունն է՝

1) խրախուսել հետազոտությունների գերազանցությունը՝ քննարկումների ու համաժողովների կազմակերպմամբ և գիտահետազոտական աշխատանքների համակարգմամբ.

2) աջակցել հայագիտական հետազոտություններին՝ կազմակերպելով կամ համակարգելով հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության, մշակույթի ուսումնասիրությունները.

3) կատարել գիտատեխնոլոգիական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ու պետական այլ նախագծերի փորձաքննություն ու ծրագրերի մշտադիտարկում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով.

4) նպաստել գիտատեխնոլոգիական ոլորտի աշխատողների մասնագիտական վերապատրաստմանը և գիտական աստիճանաշնորհման բարձր որակի ապահովմանը:

18. Ակադեմիայի գործունեության առարկան ձևավորվում է օրենքով նրա առջև դրված հիմնական խնդիրներով ու վերապահված գործառույթներով՝

1) գիտատեխնոլոգիական գործունեության բյուջետային ու արտաբյուջետային ֆինանսավորման ձևերով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հետազոտական ծրագրերի, ինչպես նաև այլ պետական ու ոչ պետական գիտատեխնոլոգիական ծրագրերի արդյունքների փորձաքննություն և արդյունավետության գնահատում.

2) Հայաստանի Հանրապետության տնտեսական, տեխնոլոգիական, բնապահպանական, սոցիալական, պատմամշակութային, անվտանգային հիմնախնդիրների վերհանում ու դրանց ուղղությամբ առաջարկությունների, գիտական, գիտատեխնոլոգիական ու ներդրումային ծրագրերի կազմման և ներկայացման համակարգում՝ համաձայն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի 11-րդ կետի և 12-րդ մասի.

3) օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետի կատարման նպատակով, համապատասխան հարցումների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ պետական մարմիններին փորձագիտական խորհրդատվության տրամադրում՝ գիտական վերլուծություն պահանջող սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ.

4) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ու լիազորված պետական այլ մարմինների հետ համատեղ՝ Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գերակա ուղղությունների, միջնաժամկետ ու երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի, գիտատեխնոլոգիական գործունեության կատարելագործմանն առնչվող օրենսդրական առաջարկությունների՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացում.

5) գիտատեխնոլոգիական առաջընթացի սկզբունքորեն նոր ուղիների բացահայտում, մասնակցություն հայրենական ու համաշխարհային գիտության նվաճումների գործնական կիրառման համար առաջարկությունների մշակմանը՝ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի 10-րդ կետի կատարման նպատակով.

6) աջակցություն ներհանրապետական ու միջազգային գիտական համագործակցության կազմակերպմանը, ներպետական ու միջազգային գիտաժողովների կազմակերպում.

7) նպաստում բարձր որակավորման գիտական կադրերի պատրաստմանը, գիտական աստիճանաշնորհման գործընթացին, գիտաշխատողների և մասնագետների որակավորման բարձրացմանը (այդ թվում՝ արտասահմանյան գիտական կազմակերպություններում), գիտական դպրոցների զարգացմանը.

8) հասարակության մեջ գիտության՝ որպես գիտելիքահենք տնտեսության զարգացման, ինչպես նաև հանրային վերափոխման գործոնի, հանրայնացում, նպաստում ժամանակակից հետազոտահենք հանրակրթության ու բարձրագույն կրթության եղանակների ներդրմանը, գիտական արդյունքների հանրահռչակում.

9) ակադեմիայի ակադեմիկոսների, ակադեմիայի ասոցացված անդամների, ակադեմիայի արտասահմանյան անդամների և ակադեմիայի պատվավոր անդամների ընտրությունների կազմակերպում և ակադեմիայի պատվավոր դոկտորի տիտղոսների շնորհում:

19. Ակադեմիայի գործառույթներն են՝

1) օրենքով սահմանված կարգով գիտական ծրագրերի արդյունքների փորձաքննության ու արդյունավետության գնահատման իրականացման համար փորձագիտական հանձնաժողովների ձևավորումն ակադեմիայի մասնագիտական բաժանմունքներում, մասնակցությունը գիտական ծրագրերի փորձաքննության սկզբունքների, մեթոդների ու գնահատման չափորոշիչների մշակմանը, փորձագիտական աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը՝ համաձայն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետի և 18-րդ մասի.

2) հանրային գիտական կազմակերպությունների գիտական գործունեության հաշվետվությունների գնահատման ու ծրագրերի կատարման ընթացքի մշտադիտարկման նպատակով տարեկան գիտաժողովների (նստաշրջանների) կազմակերպումը, փորձագիտական հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա հաշվետվությունների գնահատումն ու ներկայացումը բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում լիազոր մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ որպես գիտական կազմակերպությունների արտաքին գնահատման բաղադրիչ.

3) տնտեսական, տեխնոլոգիական, բնապահպանական, սոցիալական, պատմամշակութային, անվտանգային հիմնախնդիրների վերհանման, վերլուծության ու դրանց ուղղությամբ խորհրդատվությունների տրամադրման, ինչպես նաև առաջարկությունների, գիտական, գիտատեխնիկական ու ներդրումային ծրագրերի կազմման ու պետական մարմիններին ներկայացման նպատակով բաժանմունքներին կից ոլորտային պրոբլեմային խորհուրդների ձևավորումն ու աշխատանքների կանոնակարգումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների, կապիտալ ներդրումային ծրագրերի ու հնովացիոն նախագծերի քննարկման համար միջգերատեսչական ու միջգիտակարգային քննարկումների կազմակերպումը, մասնագիտական փորձագիտական ու խորհրդատվական խմբերի ձևավորումն ու համակարգումը.

5) հանրային և համամարդկային նշանակության գիտական խնդիրների բացահայտումը.

6) ոլորտային քաղաքականությունների գիտականորեն կշռադատված, անկախ և թափանցիկ խորհրդատվության տրամադրումը՝ ապահովելով գիտական արդյունքի փոխարկումը հանրային ու համամարդկային արժեքի.

7) գիտական ոլորտի վիճակի վերլուծության իրականացումն ու հետագա զարգացման միտումների վերաբերյալ կանխատեսումների մշակումը, գիտատեխնոլոգիական գործունեության կատարելագործմանն առնչվող օրենսդրական առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն, մասնակցությունը հիմնարար հետազոտությունների գերակա ուղղությունների որոշմանը.

8) միջգիտակարգային երկխոսության նպաստումը, միջգիտակարգային ծրագրերի մշակումը.

9) հեռանկարային գիտական ուղղություններով ներհանրապետական ու միջազգային գիտական նիստերի, գիտաժողովների, գիտական դպրոցների, սեմինարների, աշխատանքային ժողովների ու խորհրդակցությունների կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև մասնակցությունը նմանատիպ միջոցառումներին.

10) Հայաստանի Հանրապետության գիտության բնագավառի վերաբերյալ տարեկան զեկույցի պատրաստումն ու հրապարակումը՝ լիազոր մարմնի սահմանած կարգով ու չափանիշներով.

11) արտասահմանյան ակադեմիաների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի, հուշագրերի ու ճանապարհային քարտեզների կնքումը, միջազգային գիտական հանրության (այդ թվում՝ սփյուռքի) հետ համագործակցության կապերի զարգացումն ու համակարգումը, մասնակցությունը միջազգային գիտական ընկերություններին ու ասոցիացիաներին.

12) խորհրդատվական մասնակցությունը հանրապետության գիտական ու կրթական ոլորտների մասնագետների որակավորման բարձրացման ու մասնագիտական վերապատրաստման գործընթացներին, կրթական ծրագրերի ու ձեռնարկների ստեղծմանը.

13) մասնակցությունը դոկտորի գիտական աստիճանի շնորհման գործընթացին՝ ներառյալ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների կազմի ձևավորմանը և ակադեմիայում պաշտպանության կազմակերպմանը՝ լիազոր մարմնի հանձնարարականների հիման վրա.

14) հրատարակչական գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակադեմիայի գիտական ու գիտահանրամատչելի պարբերականների հիմնադրումն ու հրատարակումը, մենագրությունների և այլ գիտական նյութերի հրատարակումը, գիտատեխնիկական տեղեկատվության սեփական ռեսուրսների ստեղծումը, զարգացումն ու տարածումը հայրենական և միջազգային տեղեկատվական համակարգերում.

15) օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետով նախատեսված գիտական մշակույթի տարածումը, գիտաչափական ու գիտագրադարանային արդի ծառայությունների մատուցումը, գիտական գործունեության ու գիտական հետազոտության արդյունքում ստացված գիտելիքի նկատմամբ վստահության ձևավորումն ու գիտության հանրայնացումը.

16) հասարակության շրջանում գիտության ու գիտելիքի դերի, գիտական արդյունքի ու դրանց հեռանկարների հանրայնացումն ու քարոզչությունը, գիտահանրամատչելի նյութերի պատրաստումն ու տարածումը.

17) ակադեմիայի մրցանակների, դրանց շնորհման ընթացակարգերի սահմանումն ու շնորհումը:

20. Ակադեմիան իր գործունեությունն իրականացնում է ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրացման միջոցով՝ ինքնավարության, որոշումների ընդունման կոլեգիալության, մասնակցայնության, անկախության, անաչառության ու օբյեկտիվության սկզբունքներով:

21. Ակադեմիայի գործունեության ինքնավարությունն իր կառուցվածքային առանձնահատկությունների որոշման, օրենքով նախատեսված փորձագիտական գործառույթների իրականացումն ինքնուրույն կազմակերպելու և ֆինանսական ռեսուրսներն ինքնուրույն կառավարելու, ինչպես նաև միջազգային գիտական ու հնովացիոն գործունեության ուղղություններն ու մեթոդներն ինքնուրույն ընտրելու իրավասությունն է:

4. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

22. Ակադեմիան իրավունք ունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝ իրականացնելով դրանք անձամբ կամ այդ նպատակով ստեղծված տնտեսական ընկերությունների միջոցով՝

1) խորհրդատվական, փորձագիտական ու գիտամեթոդական ծառայությունների մատուցում.

2) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում ու դրա արդյունքների իրացում.

3) ակադեմիայի աշխատողների հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:

23. Ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ակադեմիայի ստացած եկամուտներն ուղղվում են նրա կանոնադրական խնդիրների իրականացմանը:

➤2

➢1

5. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

24. Ակադեմիայի շահառուները հանրային գիտական, կրթական, գիտաարտադրական, մշակութային ու սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառների հետ առնչություն ունեցող ֆիզիկական ու իրավաբանական անձինք են:

6. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Ակադեմիան իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) ստանալու անհրաժեշտ տեղեկություններ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար.

3) ստեղծելու հիմնադրամներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ.

4) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու նրանց մասնակից.

5) իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն.

6) ձևավորելու իր կառուցվածքը, հաստիքացուցակը, սահմանելու աշխատողների վարձատրության կարգը և չափը՝ պետական բյուջեից հատկացված և սեփական միջոցների շրջանակներում.

7) կնքելու պայմանագրեր և համաձայնագրեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ, այդ թվում՝ գիտական ծրագրերի իրականացման, փորձաքննությունների և խորհրդատվությունների մատուցման վերաբերյալ:

26. Ակադեմիան պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրության, իր կանոնադրության, միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան.

2) հրապարակել իր գործունեության մասին ամենամյա հաշվետվություն, օրենքով նախատեսված դեպքում՝ նաև ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտի եզրակացությունը.

3) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն ու հաշվապահական հաշվառում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով տեղեկություն և հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

5) ապահովել սույն մասում նշված հաշվետվությունների թափանցիկությունն ու դրանց մատչելիությունը.

6) իր կայքում հրապարակել ակադեմիայի գործունեությանը վերաբերող կանոնակարգերն ու այլ տեղեկություններ.

7) բացառել հիմնադրի կողմից ակադեմիայի անհատույց օգտագործմանը հանձնված գույքի, այդ թվում՝ շենքերի, շինությունների, հողատարածքների՝ առանց հիմնադրի որոշման գրավադրումը, օտարումը կամ անհատույց օգտագործման հանձնումը.

8) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

7. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

27. Ակադեմիայի կառավարման մարմիններն են՝

1) ակադեմիայի ընդհանուր ժողովը.

2) ակադեմիայի նախագահությունը.

3) ակադեմիայի կառավարման գործադիր մարմինը՝ ակադեմիայի նախագահը:

28. Ակադեմիան գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

29. Ակադեմիայի ղեկավար պաշտոններն են՝

1) ակադեմիայի նախագահ.

2) ակադեմիայի փոխնախագահներ.

3) ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար.

4) ակադեմիայի բաժանմունքների ղեկավարներ:

30. Ակադեմիայի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցվում են, եթե լրացել է նրա 75 տարին:

31. Ակադեմիայի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով) ակադեմիայի կոլեգիալ կառավարման մարմին է, որի ձևավորումն ու գործառույթները սահմանվում են սույն կանոնադրությամբ:

32. Ընդհանուր ժողովը նախագահում է ակադեմիայի նախագահը: Ընդհանուր ժողովի անդամներ են ակադեմիայի անդամները, բաժանմունքների ընդհանուր ժողովներում ընտրված հանրային գիտական կազմակերպությունների պատվավոր գլխավոր և պատվավոր առաջատար գիտաշխատողները, որոնց թիվը չպետք է գերազանցի ընդհանուր ժողովի անդամների 25 տոկոսը:

33. Ընդհանուր ժողովը՝

1) համաձայն օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի ընտրում է ակադեմիայի նախագահության անդամներին.

2) ընդունում է ակադեմիայի նախագահի կողմից ներկայացված ակադեմիայի տարեկան գործունեության և զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը՝ նախագահության հաստատմանը ներկայացնելու համար.

3) գնահատում է ակադեմիայի նախագահի կողմից ներկայացված՝ ակադեմիայի տարեկան գործունեության և զարգացման ռազմավարական ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունները՝ նախագահության հաստատմանը ներկայացնելու համար.

4) ընտրում է ակադեմիայի ակադեմիկոսների ու ասոցացված անդամների, ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամների.

5) սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով քննարկում ու որոշումներ է կայացնում ակադեմիայի գործառույթներին ու գործունեությանը վերաբերող ընդհանուր ժողովի անդամների բարձրացրած հարցերով:

34. Հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է առնվազն տարին մեկ անգամ՝ ժողովի օրվանից առնվազն 30 օր առաջ նախագահության որոշմամբ, որին մասնակցելու հրավեր է ուղարկվում ժողովի անդամներին: Ընդհանուր ժողով կարող է հրավիրվել նաև ակադեմիայի նախագահի նախաձեռնությամբ, ինչպես նաև ակադեմիայի անդամների 1/3-ի գրավոր պահանջով:

35. Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ներկա է ժողովին մասնակցելու գրավոր համաձայնություն տված անդամների՝ ցուցակային կազմի կեսից ավելին:

36. Ընդհանուր ժողովի ցուցակային կազմը, օրակարգն ու օրակարգային հարցերի քվեարկության ձևը (բաց կամ գաղտնի) հաստատում է ընդհանուր ժողովը:

37. Ակադեմիայի արտասահմանյան ու պատվավոր անդամները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների ու բուհերի ղեկավարներն ընդհանուր ժողովին մասնակցում են առանց քվեարկելու իրավունքի:

38. Ընդհանուր ժողովին առանց քվեարկելու իրավունքի կարող են մասնակցել նաև նախագահության այն անդամները, որոնք ակադեմիայի անդամ չեն, և հրավիրված անձինք՝ գիտության, կրթության, մշակույթի ոլորտների ներկայացուցիչներ, պետական ու հասարակական գործիչներ, գործարարներ, որոնց անվանացանկը հաստատում է նախագահությունը:

39. Քվեարկության ժամանակ ընդհանուր ժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե ընդհանուր ժողովում քննարկվում է ժողովի որևէ անդամի վերաբերյալ հարց, ապա տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

40. Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է ներկաների 2/3-ը:

41. Սույն կանոնադրության 33-րդ կետի 4-րդ ենթակետի հարցով կազմակերպվում է բաց քվեարկություն՝ համաձայն սույն կանոնադրության 10-րդ բաժնի ակադեմիայի անդամների ընտրության կարգի, որին մասնակցելու իրավունք ունեն միայն ակադեմիայի անդամները:

42. Ընդհանուր ժողովներն արձանագրվում են և տեսագրվում: Տեսագրված նյութը պահպանվում է առնվազն 5 տարի:

43. Ակադեմիայի նախագահության լիազորությունների ժամկետը 5 տարի է:

44. Նախագահությունը կազմված է տասնմեկ անդամից:

45. Նախագահությունը գլխավորում է Հայաստանի Հանրապետության նախագահը: Նախագահության անդամներից երկուսին առաջադրում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մյուս ութ անդամներին ընտրում է ընդհանուր ժողովը՝ ակադեմիայի կազմից: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել նախագահության անդամ:

46. Նախագահության անդամ չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

47. Նախագահության անվանական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

48. Նախագահության անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

49. Նախագահության անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ նախագահության նիստի օրակարգի ու քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և նախագահության քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, նախագծեր, այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ.

3) ստանալու տեղեկություն ակադեմիայի գործունեությանը վերաբերող հարցերի մասին.

4) ներկայացնելու սույն կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու առաջարկություններ.

5) նպաստելու ակադեմիայի արտաբյուջետային միջոցների համալրմանը:

50. Նախագահության անդամները պարտավոր են՝

1) մասնակցել նախագահության նիստերին.

2) իրենց պարտականություններն իրականացնել՝ ելնելով օրենքներից, ենթաօրենսդրական ակտերից, սույն կանոնադրությունից, իրավական այլ ակտերից, ակադեմիայի շահերից:

51. Նախագահության անդամի լիազորությունը դադարեցվում է՝

1) նախագահության նախագահին ուղղված սեփական գրավոր դիմումի հիման վրա.

2) նախագահության լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

4) ստանձնած պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ նախագահության մնացյալ անդամների քվեների առնվազն երեք քառորդով՝ նրան առաջադրող մարմնի հաստատմամբ.

5) նրան առաջադրած մարմնի որոշմամբ.

6) նրա մահվան դեպքում:

52. Նախագահության անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է՝ համաձայն սույն կանոնադրությամբ սահմանված ընթացակարգի:

53. Նախագահությունն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նախագահության նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ՝ նախագահության նախագահի նախաձեռնությամբ: Նախագահության նիստերը կարող են հրավիրվել նաև նախագահության անդամների 1/3-ի պահանջով՝ նախագահության նախագահին համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Նախագահության նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա ու հեռավար եղանակների զուգակցմամբ) եղանակներով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

54. Նախագահության որոշումներն ընդունվում են սույն կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն: Նախագահության նիստն իրավազոր է, եթե մասնակցում է նրա անդամների 2/3-ը: Քվեարկության ժամանակ նախագահության յուրաքանչյուր անդամ ունի մեկ քվեի իրավունք: Նախագահության որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Եթե նախագահության նիստում քննարկվում է նախագահության որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) վերաբերյալ հարց, ապա նախագահության տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

55. Նախագահության նիստերն արձանագրվում են: Առկա, հեռավար կամ համակցված եղանակով անցկացված նիստերը նաև ձայնագրվում են և պահպանվում առնվազն 5 տարի:

56. Նախագահությունն իրավասու է՝

1) հաստատելու սեփական աշխատակարգը.

2) մշակելու ու հաստատելու ակադեմիայի նախագահի ընտրության կանոնակարգը և կազմակերպելու ընտրություն, ընդունելու որոշում ակադեմիայի նախագահի ընտրության մասին, նշանակելու ակադեմիայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունելու ակադեմիայի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման որոշում.

3) ակադեմիայի նախագահի ներկայացմամբ ընտրելու ակադեմիայի փոխնախագահների, ակադեմիայի ակադեմիկոս քարտուղարի և բաժանմունքների ղեկավարների.

4) հաստատելու ընդհանուր ժողովի կողմից երաշխավորված ակադեմիայի տարեկան գործունեության և զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրերը.

5) լսելու և գնահատելու ընդհանուր ժողովի կողմից երաշխավորված՝ ակադեմիայի տարեկան գործունեության ու զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունները.

6) քննարկելու ակադեմիայի նախագահին անվստահություն հայտնելու հարցը, (եթե նա չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր պաշտոնեական պարտականությունները, խախտում է ՀՀ օրենսդրությունը կամ սույն կանոնադրությունը, օբյեկտիվ պատճառներով ի վիճակի չէ կատարելու իր լիազորությունները) և կայացնելու որոշում՝ նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին.

7) հաստատելու ակադեմիայի կառուցվածքը, փոփոխություններ կատարելու կառուցվածքում, ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու կառուցվածքային ստորաբաժանումներ.

8) հաստատելու ակադեմիայի հաստիքացուցակը, հաստիքացուցակում լրացումներն ու փոփոխությունները.

9) ակադեմիայի նախագահի ներկայացմամբ հաստատելու ակադեմիայի բաժանմունքների, խորհուրդների և հանձնաժողովների գործունեության օրինակելի կանոնակարգերը, ընթացակարգերը, ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները, էթիկայի կանոնագիրքն ու ներքին իրավական այլ ակտեր.

10) հաստատելու ակադեմիայի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, դրա փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ակադեմիայի գործունեության մասին տարեկան հաշվետվությունն ու տարեկան հաշվեկշիռը.

11) սահմանելու ակադեմիայի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները, ընդունելու տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման մասին որոշումներ, հաստատելու դրանց կանոնադրությունները.

12) վերահսկելու ակադեմիայի գործունեությունը (այդ թվում՝ ֆինանսատնտեսական).

13) ընդունելու որոշումներ նախագահության անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

14) կասեցնելու ակադեմիայի նախագահի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները, հրահանգներն ու ցուցումները կամ դրանք ճանաչելու ուժը կորցրած.

15) վերահսկելու իր որոշումների կատարման ընթացքը.

16) ընդունելու որոշում ակադեմիայի լուծարման հարցով դատարան դիմելու մասին.

17) նշանակելու ակադեմիայի լուծարման հանձնաժողով (լուծարող), սահմանելու լուծարման կարգն ու ժամկետը, հաստատելու լուծարման միջանկյալ հաշվեկշիռն ու լուծարման հաշվեկշիռը.

18) մշակելու առաջարկություններ ակադեմիայի կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին, ընդունելու համապատասխան որոշում և պետական լիազոր մարմնի միջոցով ներկայացնելու այն Հայաստանի Հանրապետության կառավարություն.

19) մշակելու առաջարկություն և ընդունելու որոշում ակադեմիայի վերակազմակերպման մասին և պետական լիազոր մարմնի միջոցով ներկայացնելու այն Հայաստանի Հանրապետության կառավարություն.

20) հաստատելու ակադեմիայի գույքի տնօրինման կարգը.

21) ակադեմիայի նախագահի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով ակադեմիային անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքը վարձակալության տրամադրելու հայտ ներկայացնելու պետական լիազոր մարմին.

22) հաստատելու հարյուր միլիոն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերը.

23) ընդունելու որոշում ակադեմիայի ընդհանուր ժողով հրավիրելու մասին, հաստատելու ժողովի մասնակիցների ցուցակը.

24) ընդունելու որոշում ակադեմիայի նախագահի ներկայացմամբ ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգը լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելու համար.

25) ակադեմիայի նախագահի ներկայացմամբ հաստատելու ակադեմիայի ակադեմիկոսների և ասոցացված անդամների ընտրությունների համար թափուր տեղերի ցանկը՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության մասնագիտությունների դասիչների.

26) հաստատելու ակադեմիական էթիկայի՝ ներառյալ ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքներին վերաբերող հարցերի քննման ներքին ընթացակարգը և էթիկայի միջոլորտային հանձնաժողովի ձևավորման կարգը.

27) կայացնելու որոշում՝ դիմելու ակադեմիայի նախագահին՝ ակադեմիայի աշխատակցին զբաղեցրած պաշտոնից հեռացնելու մասին, աշխատակցի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծարելու համար, եթե էթիկայի հանձնաժողովի կողմից իրականացված հանրային լսումների արդյունքում նրա գործունեության ընթացքում բացահայտվել են ակադեմիական էթիկայի՝ ներառյալ ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքների խախտումներ:

57. Նախագահության իրավասությանը վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

58. Նախագահության նախագահը՝

1) հրավիրում և վարում է նախագահության նիստերը, կազմակերպում նիստերի արձանագրության վարումը.

2) ստորագրում է նախագահության որոշումներն ու նիստերի արձանագրությունները.

3) կարող է ստեղծել ժամանակավոր հանձնախմբեր և նշանակել դրանց նախագահներին՝ նախագահության գործունեության իրավասության շրջանակում քննարկումներ անցկացնելու համար.

4) ակադեմիայի անունից ակադեմիայի նախագահի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) իրականացնում է սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

59. Նախագահության նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, նախագահության որոշմամբ, կատարում է նախագահության անդամներից մեկը:

60. Ակադեմիայի գործադիր մարմինն ակադեմիայի նախագահն է, որն իրականացնում է ակադեմիայի ընթացիկ գործունեության ընդհանուր ու օպերատիվ ղեկավարումը:

61. Ակադեմիայի նախագահին ընտրում է նախագահությունը՝ ակադեմիայի ակադեմիկոսների կազմից, փակ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ: Ընտրության արդյունքները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ակադեմիայի նախագահ:

62. Ակադեմիայի նախագահն իր իրավասությունների սահմաններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու սույն կանոնադրության համաձայն, գործում է միանձնյա:

63. Ակադեմիայի նախագահի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ ու նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

64. Ակադեմիայի նախագահը՝

1) ղեկավարում է ակադեմիայի վարչական, գիտական, փորձագիտական, տնտեսական, ֆինանսական, միջազգային ու այլ գործունեությունները.

2) նախագահում է ակադեմիայի ընդհանուր ժողովը.

3) ղեկավարում է ակադեմիայի գիտական խորհուրդը.

4) ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ու նախագահության որոշումների կատարումը.

5) ստորագրում է ակադեմիայի կողմից կնքվող պայմանագրերն ու համաձայնագրերը.

6) կազմակերպում է ակադեմիայի բաժանմունքների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների, մասնագիտական խորհուրդների աշխատանքները՝ ապահովելով դրանց բնականոն ու ներդաշնակ գործունեությունը.

7) ըստ անհրաժեշտության՝ ձևավորում է ակադեմիայի նախագահին կից խորհրդակցական մարմիններ (հանձնաժողովներ, խորհուրդներ, աշխատանքային խմբեր և այլն).

8) ակադեմիայի ընդհանուր ժողովին է ներկայացնում ակադեմիայի տարեկան գործունեության հաշվետվությունն ու զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը.

9) նախագահության հաստատմանն է ներկայացնում ակա-

➢3

➤2 դեմիայի եկամուտների ու ծախսերի նախահաշիվը, ակադեմիայի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունները, ակադեմիայի կառուցվածքը, հաստիքացուցակը կամ դրանց փոփոխությունները.

10) նախագահության հաստատմանն է ներկայացնում ակադեմիայի բաժանմունքների, փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների, պրոբլեմային խորհուրդների գործունեության օրինակելի կանոնակարգերը, ընթացակարգերը, ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները, էթիկայի կանոնագիրքն ու ներքին իրավական այլ ակտեր.

11) սույն կանոնադրության համաձայն՝ կազմավորում է կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման մարմինները, սահմանում է աշխատողների լիազորություններն ու պաշտոնեական պարտականությունները.

12) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում աշխատողներին, ներկայացուցչությունների, հիմնարկների տնօրեններին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ, կարգապահական տույժեր, կազմակերպում է աշխատողների շարունակական վերապատրաստումը.

13) աշխատանքային պայմանագրեր է կնքում աշխատողների հետ, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և աշխատանքային պայմանագրով նախատեսված դեպքերում աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման պարագայում լուծում է կնքված աշխատանքային պայմանագրերը.

14) ակադեմիայի փոխնախագահի, ակադեմիկոս քարտուղարի կամ բաժանմունքի ղեկավարի սեփական նախաձեռնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում աշխատանքից ազատման դեպքում հրամանով այդ պաշտոնում մինչև վեց ամիս ժամկետով նշանակում է ժամանակավոր պաշտոնակատար անձի, որը համապատասխանում է սույն կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով տվյալ պաշտոնին ներկայացվող պահանջներին.

15) կնքում է մինչև հարյուր միլիոն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի չափով պայմանագրեր՝ առանց նախագահության որոշման.

16) կասեցնում է բաժանմունքների ու կառուցվածքային այլ ստորաբաժանումների կառավարման մարմինների այն որոշումները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը.

17) իր բացակայության դեպքում ակադեմիայի նախագահի պարտականությունների կատարումը հանձնարարում է ակադեմիայի փոխնախագահին.

18) տալիս է ակադեմիայի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով, բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

19) հաստատում ու լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության հանրային գիտական կազմակերպությունների հաշվետվությունների գնահատման արդյունքները՝ որպես գիտական կազմակերպությունների արտաքին գնահատման բաղադրիչ.

20) համակարգում է ակադեմիայի բաժանմունքներին կից գործող պրոբլեմային խորհուրդների աշխատանքը, հաստատում ու պետական կառավարման մարմիններին է ներկայացնում պրոբլեմային խորհուրդների նախագծերն ու եզրակացությունները.

21) ակադեմիայի նախագահության որոշմամբ լիազոր մարմնի հաստատմանն է ներկայացնում ակադեմիայի ակադեմիկոսների և ասոցացված անդամների, ինչպես նաև արտասահմանյան և պատվավոր անդամների ընտրության հավելյալ պահանջները՝ ներառյալ գնահատման հաշվարկի մեթոդաբանությունը, բաղադրիչների քաշային գործակիցները և շեմային արժեքը՝ ըստ տիտղոսի (ակադեմիկոս և ասոցացված անդամ) ու բնագավառի.

22) նախագահության հաստատմանն է ներկայացնում ակադեմիայի անդամների, ինչպես նաև արտասահմանյան և պատվավոր անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգը.

23) ակադեմիայի բաժանմունքների առաջարկությունների հիման վրա կազմում և նախագահության հաստատմանն է ներկայացնում ակադեմիայի ակադեմիկոսների ու ասոցացված անդամների ընտրությունների համար թափուր տեղերի ցանկը՝ ըստ գիտական գործունեության մասնագիտությունների դասիչների.

24) ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորմամբ ընդունում է որոշումներ ակադեմիայի պատվավոր կոչումների, մրցանակների ու մեդալների շնորհման մասին.

25) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ու ակադեմիայի կառավարման այլ մարմիններին չվերապահված լիազորություններ:

65. Ակադեմիայի նախագահի լիազորությունները դադարեցվում են, եթե լրացել է նրա 75 տարին:

66. Ակադեմիայի նախագահի ընտրության արդյունքները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

67. Ակադեմիայի փոխնախագահներին ու ակադեմիկոս քարտուղարին ընտրում է ակադեմիայի նախագահությունն ակադեմիայի նախագահի ներկայացմամբ՝ ակադեմիայի անդամներից՝ 5 տարի ժամկետով, փակ, գաղտնի քվեարկությամբ, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել միևնույն պաշտոնում:

68. Ակադեմիայի փոխնախագահը՝

1) փոխարինում է ակադեմիայի նախագահին՝ նրա բացակայության դեպքում.

2) իր իրավասության շրջանակում համակարգում է ակադեմիայի բաժանմունքների ու կառուցվածքային ստորաբաժանումների, փորձագիտական հանձնաժողովների ու մասնագիտական խորհուրդների գործունեությունը.

3) պատրաստում ու ակադեմիայի նախագահին է ներկայացնում ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների, պրոբլեմային խորհուրդների ու փորձագիտական հանձնաժողովների կանոնակարգերը, ընթացակարգերը, ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները, էթիկայի կանոնագիրքն ու ներքին իրավական այլ ակտեր.

4) կատարում է ակադեմիայի բաժանմունքների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգում ու վերահսկում.

5) համակարգում է ակադեմիայի ներպետական ու միջազգային համագործակցությունը.

6) սահմանված կարգով համակարգում է դոկտորի գիտական աստիճանի շնորհման գործընթացը՝ ներառյալ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների կազմի ձևավորումը և ակադեմիայում պաշտպանության կազմակերպումը.

7) ակադեմիայի նախագահի հանձնարարությամբ կատարում է այլ գործառույթներ:

69. Ակադեմիայի ակադեմիկոս քարտուղարը՝

1) նախապատրաստում է ընդհանուր ժողովները, նախագահության նիստերը, վերահսկում է ընդհանուր ժողովների ու նախագահության որոշումների, ակադեմիայի նախագահի հրամանների ու կարգադրությունների կատարումը.

2) կազմակերպում է ակադեմիայի տարեկան գործունեության ու զարգացման ռազմավարական ծրագրի տարեկան հաշվետվությունների պատրաստումը.

3) համակարգում է ակադեմիայի բաժանմունքների ընթացիկ աշխատանքը.

4) պատրաստում ու ակադեմիայի նախագահի հաստատմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության գիտության բնագավառի վերաբերյալ տարեկան զեկույցը.

5) համակարգում է կապը Հայաստանի Հանրապետության պետական և այլ մարմինների հետ.

6) ակադեմիայի նախագահի հանձնարարությամբ կատարում է այլ գործառույթներ:

8. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

70. Ակադեմիան ունի կառուցվածքային ստորաբաժանումներ՝ բաժանմունքներ, վարչական, օժանդակ ստորաբաժանումներ: Նախագահության որոշմամբ ակադեմիան կարող է ստեղծել նաև առանձնացված ստորաբաժանումներ՝ հիմնարկներ:

71. Բաժանմունքն ակադեմիայի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է, որն իրականացնում է սույն կանոնադրության 19-րդ կետով նախատեսված գործառույթները:

72. Բաժանմունքը միավորում է մեկ կամ մի քանի հարակից գիտական բնագավառների ակադեմիայի անդամներին՝ Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների ու բուհերի պատվավոր գլխավոր ու պատվավոր առաջատար գիտաշխատողներին, ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամներին:

73. Բաժանմունքների թիվը, անվանումներն ու դրանցում ներառված գիտական բնագավառները հաստատում է նախագահությունը՝ ակադեմիայի նախագահի ներկայացմամբ:

74. Բաժանմունքի ղեկավարման մարմիններն են բաժանմունքի ընդհանուր ժողովն ու բաժանմունքի ղեկավարը:

75. Բաժանմունքի ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցում են սույն կանոնադրության 72-րդ կետում թվարկված բաժանմունքի անդամները: Ակադեմիայի արտասահմանյան ու պատվավոր անդամները ժողովի աշխատանքներին մասնակցում են առանց քվեարկության իրավունքի: Բաժանմունքի ընդհանուր ժողովը նախագահում է բաժանմունքի ղեկավարը:

76. Բաժանմունքի ընդհանուր ժողովի գործառույթներն ու աշխատակարգը սահմանվում են սույն կանոնադրության դրույթներով հաստատված՝ ակադեմիայի բաժանմունքի գործունեության կանոնակարգով:

77. Բաժանմունքի ընդհանուր ժողովը՝

1) հաստատում է բաժանմունքի աշխատանքների տարեկան պլանը.

2) հաստատում է բաժանմունքի տարեկան հաշվետվությունը.

3) առաջադրում է բաժանմունքի փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների և պրոբլեմային խորհուրդների կազմը.

4) ակադեմիայի նախագահին ներկայացնում է բաժանմունքի գործունեության ուղղությամբ ակադեմիայի ակադեմիկոսների ու ասոցացված անդամների թափուր տեղերի ընտրությունների վերաբերյալ առաջարկ.

5) երաշխավորում է ակադեմիայի տվյալ բնագավառի անդամների՝ ակադեմիկոսների ու ասոցացված անդամների թեկնածությունները՝ ակադեմիայի նախագահության կազմի ընտրությանը մասնակցելու համար.

6) պատվավոր գլխավոր ու պատվավոր առաջատար գիտաշխատողների կազմից ընտրում է ակադեմիայի ընդհանուր ժողովի անդամներին:

78. Բաժանմունքի հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է բաժանմունքի ղեկավարը՝ առնվազն տարին երկու անգամ՝ ժողովի օրվանից 15 օր առաջ տեղեկացնելով ժողովի անդամներին: Ընդհանուր ժողով կարող է հրավիրվել նաև բաժանմունքի ակադեմիայի անդամների 1/3-ի գրավոր պահանջով:

79. Բաժանմունքի ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ներկա է նրա անդամների կեսից ավելին: Ժողովի օրակարգն ու օրակարգային հարցերի քվեարկության ձևը (բաց կամ փակ գաղտնի) հաստատվում է ժողովում բաց քվեարկությամբ՝ ժողովի մասնակիցների ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ:

80. Քվեարկության ժամանակ բաժանմունքի ժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ քվե: Եթե ընդհանուր ժողովում քննարկվում է ժողովի որևէ անդամի վերաբերյալ հարց, ապա տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

81. Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է ներկաների 50 տոկոսից ավելին:

82. Բաժանմունքի ղեկավարին ակադեմիայի անդամներից ընտրում է ակադեմիայի նախագահությունը՝ հինգ տարի ժամկետով՝ ակադեմիայի նախագահի ներկայացմամբ:

83. Բաժանմունքի ղեկավարը՝

1) համակարգում է բաժանմունքի աշխատանքը.

2) բաժանմունքի ընդհանուր ժողովի երաշխավորությամբ ձևավորում է փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների ու պրոբլեմային խորհուրդների կազմը և այն ներկայացնում է ակադեմիայի նախագահին, կազմակերպում է այդ հանձնաժողովների ու խորհուրդների աշխատանքը.

3) կազմակերպում է մասնագիտական, միջգերատեսչական և միջգիտակարգային նիստեր, լսումներ, կլոր սեղաններ ու քննարկումներ՝ հանրային նշանակության գիտական խնդիրների բացահայտման, տնտեսական, տեխնոլոգիական, բնապահպանական, սոցիալական, պատմամշակութային, անվտանգային հիմնախնդիրների վերհանման, վերլուծության ու դրանց ուղղությամբ առաջարկություններ, գիտական, գիտատեխնիկական (այդ թվում՝ նպատակային) ու ներդրումային ծրագրեր կազմելու նպատակով.

4) համակարգում է բաժանմունքի գործունեության ուղղություններով գիտատեխնիկական ոլորտի վիճակի վերլուծության իրականացումն ու հետագա զարգացման միտումների վերաբերյալ կանխատեսումների մշակումը.

5) մշակում է գիտական ու գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանն առնչվող օրենսդրական, ինչպես նաև գիտության գերակա ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ.

6) համակարգում է հեռանկարային գիտական ուղղություններով ներպետական և միջազգային գիտական նիստերի, գիտաժողովների, գիտական դպրոցների, սեմինարների, աշխատանքային ժողովների, խորհրդակցությունների կազմակերպումն ու անցկացումը.

7) համապետական տարեկան գիտական հաշվետու նստաշրջանի շրջանակում կազմակերպում է բաժանմունքի գործունեության ոլորտներում գործող՝ Հայաստանի Հանրապետության հանրային գիտական կազմակերպությունների գիտական գործունեության տարեկան հաշվետվությունների լսումներ ու քննարկումներ՝ համապատասխան ոլորտային մասնագիտական փորձագիտական հանձնաժողովի մասնակցությամբ.

8) համակարգում է բաժանմունքի ոլորտային պրոբլեմային խորհրդի/խորհուրդների բնականոն գործունեությունը, հրավիրում է նիստեր, կազմակերպում է մասնագիտական քննարկումներ հանրապետությունում առկա տարաբնույթ խնդիրների հիմնապատճառների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ.

9) ակադեմիայի նախագահի հանձնարարությամբ կատարում է ակադեմիայի կանոնադրությունից բխող այլ գործառույթներ:

84. Բաժանմունքում իրականացվող առանձին գործառույթների (փորձագիտական, վերլուծաբանական) կատարման համար ստեղծվում են փորձագիտական մասնագիտական հանձնաժողովներ ու պրոբլեմային խորհուրդներ, որտեղ ներգրավվում են ակադեմիայի անդամները՝ ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամները, Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների ու բուհերի պատվավոր գլխավոր ու պատվավոր առաջատար գիտաշխատողները, ինչպես նաև ակադեմիայի անդամ չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության, սփյուռքի ու արտերկրի տվյալ ոլորտի գիտնականներ, որոնց մասնակցության կարգը, պայմաններն ու գործառույթները սահմանվում են համապատասխան կանոնակարգերով:

85. Փորձագիտական մասնագիտական հանձնաժողովի գործառույթն է օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով գիտական և գիտատեխնիկական ծրագրերի, դրանց արդյունքների հաշվետվությունների փորձաքննության ու արդյունավետության գնահատման իրականացումը:

86. Պրոբլեմային խորհրդի գործառույթն է որոշակի ոլորտներում առկա հիմնախնդիրների վերլուծությունը, դրանց վերաբերյալ գիտական ու գիտամեթոդական փորձաքննությունների իրականացումը:

87. Ակադեմիայի կառուցվածքում գործում է գիտության հանրայնացման ստորաբաժանում:

88. Ակադեմիայի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ձևավորման ու գործունեության կարգերը, իրավասությունները սահմանվում են իրենց կանոնակարգերով ու իրավական այլ ակտերով:

9. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

89. Ակադեմիայի անդամ են ակադեմիայի ակադեմիկոսներն ու ասոցացված անդամները, մինչև օրենքի ընդունումն ընտրված իսկական և թղթակից անդամները:

90. Ակադեմիան իր կազմում կարող է ունենալ գումարային հարյուր անդամ, որոնք ընտրվում են մրցութային կարգով:

91. Ակադեմիայի ակադեմիկոս կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականը, որն առնվազն համապատասխանում է գիտական ու ճարտարագիտատեխնիկական կադրերի ատեստավորման կարգով գլխավոր գիտաշխատողի տարակարգի համար սահմանված պահանջներին:

92. Ակադեմիայի ասոցացված անդամ կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականը, որն առնվազն համապատասխանում է գիտական ու ճարտարագիտատեխնիկական կադրերի ատեստավորման կարգով առաջատար գիտաշխատողի տարակարգի համար սահմանված պահանջներին:

93. Ակադեմիայի ակադեմիկոսների և ասոցացված անդամների ընտրության հավելյալ պահանջները սահմանվում են ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով, որը ակադեմիայի ներկայացմամբ հաստատում է լիազոր մարմինը:

94. Ակադեմիայի ակադեմիկոսի և ասոցացված անդամի գիտական տիտղոսները շնորհվում են ցմահ և ամրագրվում են դիպլոմներով:

95. Ակադեմիայի անդամը կարող է զրկվել գիտական տիտղոսից, եթե իր գործունեության ընթացքում բացահայտվել են ակադեմիական էթիկայի՝ ներառյալ ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքների խախտումներ: Այդ պարագայում ակադեմիայի նախագահությունը կազմակերպում է էթիկայի հանձնաժողովի կողմից իրականացվող հանրային լսումներ, որի արդյունքում կարող է ակադեմիայի ընդհանուր ժողովի բաց քվեարկության դրվել տվյալ ակադեմիայի անդամի գիտական տիտղոսից զրկելու հարցը: Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն միայն ակադեմիայի անդամները: Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է ներկաների 2/3-ը:

96. Ակադեմիայի ակադեմիկոսներին և ասոցացված անդամներին գիտական ու գիտատեխնիկական գործունեության առնվազն 30 տարվա ստաժի առկայության ու 75 տարին լրանալու դեպքում հատկացվում է ամենամսյա դրամական վճար՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի կրկնակի չափով՝ ասոցացված անդամների համար և եռակի չափով՝ ակադեմիկոսների համար: Վճարը տրամադրվում է ակադեմիայի այն անդամներին, որոնք մշտապես ապրում են Հայաստանի Հանրապետությունում: Երկրից երեք ամսից ավելի բացակայելու դեպքում վճարը կարող է հատկացվել նախագահության որոշմամբ՝ ներկայացված փաստաթղթերով հիմնավորված հարգելի պատճառների (ծառայողական գործուղման, մասնագիտական վերապատրաստման, բուժման, միջազգային գիտական ծրագրերի իրականացման) առկայության պարագայում: Մինչև օրենքի և սույն կանոնադրության ուժի մեջ մտնելը ակադեմիայի ընտրված իսկական անդամների և թղթակից անդամների համար նախկինում սահմանված պատվովճարները պահպանվում են ամբողջությամբ՝ ցմահ (առանց տարիքային սահմանափակման), Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով ու չափով:

97. Ակադեմիայի անդամները մասնակցում են ակադեմիայի նախագահության ընտրությանը՝ քվեի իրավունքով:

98. Ակադեմիայի անդամն իրավունք ունի՝

1) ներառվելու ակադեմիայի միայն մեկ բաժանմունքի կազմում.

2) ներգրավվելու բաժանմունքում գործող փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների ու պրոբլեմային խորհուրդների կազմում.

3) ընտրվելու ակադեմիայի ղեկավար մարմինների կազմում.

4) բաժանմունքի ղեկավարի, բաժանմունքի ընդհանուր ժողովի ու բաժանմունքի կազմում գործող փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների ու պրոբլեմային խորհուրդների քննարկմանը ներկայացնելու գիտական ու գիտակազմակերպական հարցեր ու առաջարկներ:

99. Ակադեմիայի անդամը պարտավոր է՝

1) կատարել ակադեմիայի ղեկավար մարմինների որոշումները, մասնակցել ակադեմիայի առջև դրված խնդիրների կատարմանը.

2) մասնակցել ակադեմիայի ու բաժանմունքների ընդհանուր ժողովների աշխատանքներին.

3) իր գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել այն բաժանմունք, որի կազմում ընտրվել է ակադեմիայի անդամ.

4) իր աշխատանքում և պարտականությունների կատարման ժամանակ պահպանել ակադեմիական ազնվության և լրիվության սկզբունքը՝ բացառելով գրագողությունը, տվյալների կեղծումը կամ այլ ակադեմիական զեղծարարություններ և իր հնարավորությունների շրջանակում կանխել դրանց դրսևորումները, պահպանել իր աշխատավայրի և ակադեմիայի սահմանած բարեվարքության և էթիկայի կանոնակարգի պահանջները, գիտատեխնոլոգիական գործունեությամբ վնաս չհասցնել մարդու կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին.

5) ակադեմիայում իր գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավորապես կասեցնելու վերաբերյալ որոշումը գրավոր հիմնավորմամբ ներկայացնել ակադեմիայի նախագահին:

10. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

100. Ակադեմիայի ակադեմիկոսների և ասոցացված անդամների ընտրության համար թափուր տեղերի ցանկը, ըստ գիտատեխնոլոգիական գործունեության մասնագիտությունների, հաստատում է նախագահությունը՝ ակադեմիայի բաժանմունքների առաջարկների հիման վրա՝ ակադեմիայի նախագահի ներկայացմամբ:

101. Ակադեմիայի անդամության թեկնածուների գիտատեխնոլոգիական գործունեության գնահատումն իրականացվում է ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով սահմանված չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով թեկնածուի գիտական արդյունքների նշանակությունը և ազդեցությունը համապատասխան գիտության ոլորտի զարգացման վրա:

102. Ակադեմիայի անդամության թեկնածուների գիտատեխնոլոգիական գործունեության գնահատման ժամանակ հաշվի են առնվում նրանց՝ ➤4

➤3 1) գիտական հրապարակումները, այդ թվում՝ միջազգային գրախոսվող ամսագրերում, գիտական ժողովածուներում և հեղինակավոր գիտական հրատարակություններում հրապարակված հոդվածներն ու մենագրությունները.

2) գիտաչափական ցուցանիշները, մասնավորապես, գիտական աշխատությունների մեջբերումները և միջազգային գիտական տեղեկատվական համակարգերում ներկայացված տվյալները.

3) ներդրումը գիտության տվյալ ոլորտի զարգացման գործում, այդ թվում՝ իրականացված հետազոտությունների նորարարական բնույթը և դրանց գիտական նշանակությունը.

4) ներդրումները գիտական կադրերի պատրաստման և գիտական դպրոցների ձևավորման գործում, ինչպես նաև երիտասարդ գիտնականների գիտատեխնոլոգիական գործունեության խթանման ուղղությամբ իրականացված աշխատանքները.

5) մասնակցությունը միջազգային գիտական համագործակցությանը, այդ թվում՝ միջազգային ծրագրերին, գիտաժողովներին և համատեղ գիտական հետազոտություններին.

6) մասնակցությունը գիտության կազմակերպման և զարգացման գործընթացներին, այդ թվում՝ գիտական ծրագրերի իրականացման, գիտական կազմակերպությունների կառավարման և գիտության հանրայնացման ոլորտներում իրականացված գործունեությունը:

103. Թեկնածուների գիտատեխնոլոգիական գործունեության գնահատման չափանիշների կիրառման կարգը, ներառյալ շեմային պահանջները և գնահատման մեթոդաբանությունը, սահմանվում է ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով:

104. Յուրաքանչյուր մասնագիտության գծով ակադեմիայի անդամների թափուր տեղերի քանակը սահմանվում է երկու ցուցակով՝

1) առանց տարիքային սահմանափակման.

2) 51 տարին չլրացած գիտնականների համար:

105. Եթե որևէ մասնագիտության դեպքում հատկացվում է մեկ թափուր տեղ, ապա այն նախատեսվում է առանց տարիքային սահմանափակման ընտրության համար:

106. Ընտրություն անցկացնելու մասին նախագահության հայտարարությունը հրապարակվում է ակադեմիայի պաշտոնական կայքում՝ ոչ ուշ, քան ընտրություններ անցկացնելու օրվանից 2 ամիս առաջ: Հայտարարությանը կից հրապարակվում է լիազոր մարմնի կողմից հաստատված՝ ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգը, որում սահմանված են ակադեմիկոսների և ասոցացված անդամների ընտրության հավելյալ պահանջները:

107. Ակադեմիայի ակադեմիկոսների ու ասոցացված անդամների թեկնածուների առաջադրումը վերապահվում է ակադեմիայի անդամներին, ինչպես նաև գիտական կազմակերպություններին ու բարձրագույն ուսումնական հաստատություններին, որտեղ թեկնածուներն ըստ մասնագիտությունների առաջադրվում են գիտական, գիտատեխնիկական խորհուրդների որոշումներով:

108. Ակադեմիայի անդամի թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ բաժանմունքի շրջանակում, մեկ մասնագիտությամբ:

109. Ակադեմիայի անդամների ընտրություններն անցկացվում են երկու փուլով՝

1) առաջադրված թեկնածուների երաշխավորում բաժանմունքներում.

2) երաշխավորված թեկնածուների ընտրություն ակադեմիայի ընդհանուր ժողովում:

110. Ակադեմիայի նախագահի հրամանով ակադեմիկոս քարտուղարին կից ստեղծվում է տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների ներգրավմամբ աշխատանքային խումբ՝ ակադեմիայի անդամի թեկնածության հայտերի համապատասխանությունն ընտրված մասնագիտություններին և ընտրության պայմաններին ստուգելու, ինչպես նաև թեկնածուների վարկանիշային ցուցակը կազմելու նպատակով: Այն դեպքում, երբ առաջադրված թեկնածության հայտն առնչվում է տարբեր բաժանմունքների գործունեության հետ, ապա թեկնածուի՝ այս կամ այն բաժանմունքում առաջադրվելու որոշումն ընդունում է աշխատանքային խումբը: Ակադեմիայի անդամի առաջադրված և գրանցված թեկնածուների ցուցակն ըստ մասնագիտությունների հրապարակվում է ակադեմիայի պաշտոնական կայքում:

111. Թափուր տեղերի հիման վրա ակադեմիայի նախագահի հրամանով բաժանմունքներին կից ձևավորվում են հայտերի վերլուծության ու գնահատման մասնագիտական հանձնաժողովներ:

112. Հանձնաժողովների աշխատակարգը սահմանվում է ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով:

113. Ակադեմիայի բաժանմունքներին կից ձևավորված մասնագիտական հանձնաժողովները գնահատում են թեկնածուների գիտատեխնոլոգիական գործունեության արդյունավետությունն ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով սահմանված չափանիշների հիման վրա: Գնահատման արդյունքների հիման վրա մասնագիտական հանձնաժողովները համապատասխան արձանագրությամբ տալիս են ընտրությանը մասնակցելու երաշխավորություն:

114. Մասնագիտական հանձնաժողովի նիստերը հրավիրում և համակարգում է բաժանմունքի ղեկավարը: Նիստը համարվում է իրավազոր, եթե մասնակցում է հանձնաժողովի ցուցակային կազմի 2/3-ը:

115. Մասնագիտական հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել քննարկմանը, եթե առկա է շահերի բախում տվյալ թեկնածուի հետ: Հանձնաժողովի անդամը պարտավոր է շահերի բախման մասին հայտնել նիստից առնվազն 3 աշխատանքային օր առաջ: Շահերի բախման կարգավորումներն իրականացվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կանոններով:

116. Ակադեմիայի անդամի թեկնածուն ընտրության համար երաշխավորված է համարվում, եթե ստացել է քվեարկողների ցուցակային կազմի պարզ մեծամասնության քվեն՝ ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով նախատեսված կարգավորումներին համապատասխան:

117. Մասնագիտական հանձնաժողովների նիստերի արձանագրությունների հիման վրա՝ աշխատանքային խումբը ձևավորում է թեկնածուների վարկանիշային ցուցակը՝ ըստ մասնագիտությունների թափուր տեղերի՝ համաձայն ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգով սահմանված չափանիշների:

118. Ակադեմիայի անդամների ընտրություններն անցկացվում են ակադեմիայի ընդհանուր ժողովում: Ակադեմիայի անդամին ընտրելու իրավունք ունեն ակադեմիայի ակադեմիկոսներն ու ասոցացված անդամները, ինչպես նաև մինչև օրենքի ընդունումն ընտրված իսկական և թղթակից անդամները: Քվեարկողների ցուցակային կազմը հաստատում է ակադեմիայի ընդհանուր ժողովը:

119. Ակադեմիայի ընդհանուր ժողովում մասնագիտական հանձնաժողովների եզրակացությունների ներկայացումից հետո անցկացվում են ըստ մասնագիտությունների կազմված վարկանիշային ցուցակում ընդգրկված ակադեմիայի անդամի թեկնածուների անվանական ընտրություններ՝ բաց քվեարկությամբ:

120. Ակադեմիայի ընդհանուր ժողովն իրավազոր է անցկացնելու ակադեմիայի անդամների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում է ակադեմիայի անդամների ցուցակային կազմի կեսից ավելին:

121. Ակադեմիայի անդամի թեկնածուն համարվում է ընտրված, եթե ստացել է ընտրողների ցուցակային կազմի 2/3-ի քվեն:

122. Քվեների հաշվարկը կատարում է ակադեմիայի ընդհանուր ժողովի կողմից ընտրված հաշվիչ հանձնաժողովը:

123. Ակադեմիայի ընդհանուր ժողովը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ բաց քվեարկությամբ:

124. Ընտրության արդյունքները կարող են բողոքարկվել, եթե բողոքը վերաբերում է ընտրությունների ընթացակարգային խախտումներին կամ փորձագիտական գնահատման սխալներին: Բողոքները ներկայացվում են ակադեմիայի նախագահությանը՝ ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքները քննարկվում են 10 աշխատանքային օրվա ընթացքում: Քննարկման արդյունքներով ընդունվում է որոշում՝ նախագահության նիստերի կազմակերպման ընթացակարգով:

125. Ընտրությունների վերջնական արդյունքները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատումից հետո հրապարակվում են ակադեմիայի պաշտոնական կայքում:

126. Ընտրությունների ամբողջ գործընթացը փաստաթղթավորվում է: Փաստաթղթերը պահպանվում են ակադեմիայի արխիվում:

127. Սույն կարգի կիրառման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ակադեմիայի նախագահությունը:

11. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՈՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐԸ, ՊԱՏՎԱՎՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՌԱՋԱՏԱՐ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

128. Ակադեմիան շնորհում է ակադեմիայի պատվավոր անդամի, ակադեմիայի արտասահմանյան անդամի գիտական տիտղոսներ ու ակադեմիայի պատվավոր դոկտորի գիտական աստիճան, որոնք ամրագրվում են դիպլոմներով:

129. Ակադեմիայի պատվավոր անդամ կարող է ընտրվել Հայաստանի կամ արտերկրի ճանաչված գիտնականը, հասարակական կամ այլ գործիչը, որն էապես նպաստում է ակադեմիայի գործունեությանը:

130. Ակադեմիայի արտասահմանյան անդամ կարող է ընտրվել իր գործունեությամբ Հայաստանի հետ կապված, գիտական ակնառու արդյունքներ ունեցող, աշխարհում ճանաչված գիտնականը:

131. Ակադեմիայի պատվավոր դոկտորի գիտական աստիճան կարող է շնորհվել Հայաստանի կամ արտերկրի հայտնի գիտնականի, պետական, հասարակական և այլ գործչի, որն աջակցում է ակադեմիայի գործունեությանը:

132. Ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամների ընտրություններն անցկացվում են ընդհանուր ժողովում ոչ ուշ, քան յուրաքանչյուր երեք տարին մեկ՝ ակադեմիայի նախագահի առաջարկությամբ, բաժանմունքների ընդհանուր ժողովների կողմից երաշխավորված թեկնածուներից:

133. Ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամ համարվում են ընտրված այն անձինք, որոնք ընդհանուր ժողովում ստացել են քվեարկության իրավունքով ժողովի մասնակիցների քվեների առնվազն 2/3-ը:

134. Պատվավոր դոկտորի գիտական աստիճանը շնորհում է ակադեմիայի նախագահը՝ բաժանմունքի ընդհանուր ժողովի կողմից երաշխավորված թեկնածուին:

135. Ակադեմիան իր կազմում ներառում է Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների ու բուհերի պատվավոր գլխավոր ու պատվավոր առաջատար գիտաշխատողներին, որոնց վարձատրությունն իրականացվում է պետության կողմից ակադեմիային հատկացված միջոցներից՝ համաձայն իրենց տարակարգին համապատասխանող գործող դրույքաչափի:

136. Ակադեմիայի ընդհանուր ժողովում ներառված պատվավոր գլխավոր ու պատվավոր առաջատար գիտաշխատողները մասնակցում են ակադեմիայի նախագահության ընտրությանը քվեի իրավունքով և կարող են ընտրվել ակադեմիայի ղեկավար մարմինների կազմում:

137. Ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամները, պատվավոր գլխավոր գիտաշխատողներն ու պատվավոր առաջատար գիտաշխատողներն իրավունք ունեն՝

1) ներառվելու ակադեմիայի միայն մեկ բաժանմունքի կազմում.

2) ներգրավվելու բաժանմունքում գործող փորձագիտական մասնագիտական հանձնաժողովների ու պրոբլեմային խորհուրդների քննարկմանը ներկայացնելու գիտական և գիտակազմակերպական հարցեր ու առաջարկներ:

138. Ակադեմիայի պատվավոր ու արտասահմանյան անդամները, պատվավոր գլխավոր գիտաշխատողներն ու պատվավոր առաջատար գիտաշխատողները պարտավոր են՝

1) կատարել ակադեմիայի ղեկավար մարմինների որոշումները, մասնակցել ակադեմիայի առջև դրված խնդիրների լուծմանը.

2) իրենց գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել այն բաժանմունք, որի կազմում են.

3) ակադեմիայում իրենց գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու վերաբերյալ որոշման մասին գրավոր հիմնավորմամբ տեղեկացնել ակադեմիայի նախագահին:

12. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

139. Ակադեմիան ինքնուրույն է պլանավորում իր գործունեությունը, մշակում զարգացման հեռանկարները և ընդունում իր գործունեության վերաբերյալ որոշումներ:

140. Ակադեմիան ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան ու պայմանները:

141. Կանոնադրական գործունեությունն իրականացնելիս ակադեմիան իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

142. Ակադեմիան ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է միայն այն դեպքերում, երբ այն համապատասխանում է իր կանոնադրությանը կամ ծառայում է կանոնադրական իր նպատակների իրականացմանը: Ակադեմիան կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել ինքնուրույն կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

143. Ակադեմիան որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

144. Ակադեմիային պատկանող գույքը բաղկացած է նրա սեփականությունը համարվող գույքից և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նրան անժամկետ, անհատույց օգտագործման համար ամրացված գույքից:

145. Հիմնադրի կողմից ակադեմիային որպես հիմնադրի ներդրում հանձնված գույքն ակադեմիայի սեփականությունն է: Ակադեմիային սեփականության իրավունքով պատկանող շարժական ու անշարժ գույքի նկատմամբ հիմնադիրն իրավունքներ չունի՝ բացառությամբ լուծարումից հետո մնացած գույքի:

146. Ակադեմիայի սեփականությունն ամրագրվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև իր գործունեության ընթացքում ստեղծված ու ձեռք բերված գույքից:

147. Ակադեմիային ամրացված գույքի և բյուջետային միջոցների, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օգտագործման, տիրապետման ու տնօրինման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ ու հիմնադրի կողմից:

148. Ակադեմիայի սեփականության պահպանման պարտականությունը կրում է ակադեմիան:

149. Ակադեմիան իր ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներով կարող է ձեռք բերել շենքեր, շինություններ, կառույցներ, սարքավորումներ, տրանսպորտային և կապի միջոցներ, հողատարածքներ աշխատողների սոցիալական և աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված գույք, ինչպես նաև օրենքով չարգելված այլ գույք՝ ակադեմիայի կանոնադրական նպատակների և գործունեության ապահովման համար:

150. Այլ կազմակերպությունների, քաղաքացիների կողմից որպես կամավոր գույքային ներդրում հանձնված գույքը, ներառյալ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթերն ու մտավոր սեփականության նկատմամբ իրավունքները, ակադեմիայի սեփականությունն են:

151. Ակադեմիայի սեփականությունը հանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքի 20 տոկոսը գերազանցող գործարքները կնքվում են հիմնադրի համաձայնությամբ:

152. Ակադեմիայի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ ակադեմիայի մարմինների անդամների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձի ու պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի:

153. Ակադեմիայի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից, պայմանագրային աշխատանքներից ստացված եկամուտներից, հանրապետական ու միջազգային կազմակերպությունների ու մասնավոր անձանց տրամադրած միջոցներից, ակադեմիայի գույքից ու գույքային իրավունքից ստացած եկամուտներից, օրենքով չարգելվող այլ աղբյուրներից:

154. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ակադեմիայի ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

155. Իր ֆինանսավորման սահմաններում ակադեմիան ինքնուրույն է որոշում իր աշխատողների թիվը, նրանց վարձատրության կարգը, ինչպես նաև հատկացվող գումարների ծախսման հիմնական ուղղությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

156. Ակադեմիան իրավունք ունի իր տնօրինության տակ գտնվող ու չօգտագործվող գույքը (այդ թվում՝ անշարժ) հանձնելու վարձակալության: Գույքի վարձակալությունից, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության արդյունքով ստացած եկամուտները ՀՀ օրենքով սահմանված կարգով ակադեմիան կարող է օգտագործել կանոնադրական նպատակներով:

157. Ակադեմիայի պահպանման համար հատկացվող պետական ֆինանսավորումը տրվում է որպես առանձին բյուջետային միջոցառում՝ բազային ֆինանսավորման ծրագրի կազմում՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի հայտը:

158. Ակադեմիան, բացի բազային ֆինանսավորումից, սույն կանոնադրության շրջանակում կարող է դիմել այլ պետական ու ոչ պետական ֆինանսավորման ծրագրերի, ոլորտը ֆինանսավորող տարբեր մասնագիտացված կառույցների, այդ թվում՝ միջազգային:

159. Ակադեմիան իրեն հատկացված պետական ֆինանսավորման ու ցանկացած այլ ֆինանսական մուտքերի ու ծախսերի մասով հաշվետու է ոլորտի լիազոր մարմնին ու հանրությանը:

13. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

160. Ակադեմիայի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել կարող է հիմնադիրը՝ սեփական նախաձեռնությամբ կամ ակադեմիայի նախագահության ներկայացմամբ՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

161. Ակադեմիայի կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները չեն կարող վերաբերել ակադեմիայի նպատակներին կամ շահառուներին:

14. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

162. Ակադեմիայի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

163. Ակադեմիայի գործունեության վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքում՝ նաև պետական իրավասու այլ մարմիններ՝ համաձայն իրենց իրավասությունների, ստուգումների ու ուսումնասիրությունների օրենքով նախատեսված ընթացակարգերի:

164. Ակադեմիայի ֆինանսական գործունեությունը վերստուգվում է անկախ աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ անձի կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ: Նախագահության անդամների 1/3-ի պահանջով կարող է իրականացվել արտահերթ աուդիտ: Աուդիտ իրականացնող անձն ընտրվում է նախագահության կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

15. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

165. Ակադեմիան կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

166. Ակադեմիայի լուծարումը նրա գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելը:

167. Ակադեմիայի լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա: Ակադեմիայի անունից որպես շահագրգիռ անձ կարող է հանդես գալ ակադեմիայի նախագահությունը:

168. Ակադեմիան կարող է լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

169. Ակադեմիայի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին ակադեմիան չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է ակադեմիայի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Պաշտոնական հրապարակման օրը՝
18 հունիսի 2026 թվական:

ՀՀ ԳԱԱ-ն հայտարարում է ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) նախագահությունը հայտարարում է ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների՝ 2026 թվականի ընտրության մրցույթ: Հայտերի ընդունման ժամկետն է սույն թվականի հուլիսի 8-ից մինչև օգոստոսի 7-ը ներառյալ:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության՝ 2026 թվականի հունիսի 18-ի N 870-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ անդամների 2026 թվականի ընտրության մրցույթի կազմակերպման կարգի» համաձայն, ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված մասնագիտությունների գծով թափուր տեղերի ցանկին համապատասխան:

Գիտական կազմակերպություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ասոցացված անդամի թեկնածուի առաջադրումը կատարվում է համապատասխան գիտական, ակադեմիական, գիտատեխնիկական խորհուրդների որոշմամբ:

Արտասահմանյան անդամի թեկնածուն առաջադրվում է ՀՀ ԳԱԱ գիտական բաժանմունքների կողմից՝ մրցույթի կազմակերպման կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Թեկնածուների ներկայացվող փաստաթղթերը, գիտական գործունեության նկատմամբ սահմանված չափանիշները, գնահատման կարգը, ընտրության փուլերը և ժամկետները սահմանված են «ՀՀ ԳԱԱ անդամների 2026 թվականի ընտրության մրցույթի կազմակերպման կարգում»:

Ասոցացված անդամի թեկնածուի առաջադրման փաստաթղթերի փաթեթին լրացուցիչ անհրաժեշտ է կցել.

• թեկնածուի կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

• անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը

• մեկ գունավոր լուսանկար (3x4 սմ)

• բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմի (դիպլոմների) պատճենը

• գիտական աստիճանը և (կամ) գիտական կոչումը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը:

Փաստաթղթերը ներկայացվում են թղթային և էլեկտրոնային եղանակով:

Թղթային եղանակով ներկայացնելու դեպքում անձնագիրը կամ նույնականացման քարտը, բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները), ինչպես նաև գիտական աստիճանը և (կամ) գիտական կոչումը հավաստող փաստաթուղթը (փաստաթղթերը) ներկայացվում են նաև բնօրինակներով՝ ներկայացված պատճենների համապատասխանությունը ստուգելու նպատակով: Գործին կցվում են միայն փաստաթղթերի պատճենները:

Էլեկտրոնային եղանակով ներկայացվում են փաստաթղթերի սկանավորված պատճենները: Թղթային փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԳԱԱ նախագահության շենքում՝ 45 և 50 սենյակներում (հասցե՝ Մարշալ Բաղրամյան պողոտա 24): Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերն անհրաժեշտ է ուղարկել elections2026@sci.am էլեկտրոնային հասցեին:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ կապի հետևյալ միջոցներով՝
հեռախոսներ՝ (010) 516085, (010) 524461, (094) 213238, (099) 774900,
էլփոստ՝ elections2026@sci.am:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Հայ թատերագիտության պատրիարքը. Հենրիկ Հովհաննիսյան



Լրացավ Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի պատվավոր քաղաքացի, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանի ծննդյան 90-ամյա հոբելյանը:

Հ. Հովհաննիսյանը ծնվել է 1936 թ. հունիսի 3-ին Լենինական քաղաքում: 1954-1958 թթ. սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Այն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում՝ որպես ռադիոհաղորդավար՝ աշխատելով մինչև 1961 թվականը, ապա՝ 1963-1968 թթ.:

1961-ին Հ. Հովհաննիսյանն ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրա, որն ավարտել է 1964-ին: 1965-ին ՀՍՍՀ ԳԱ գրականության և լեզվի ինստիտուտների միացյալ գիտական խորհրդում Հ. Հովհաննիսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Մարտիրոս Մնակյան. կյանքը և բեմական գործունեությունը» թեմայով, և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նույն թվականին Հ. Հովհաննիսյանն աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, 1972-ին ատեստավորվել որպես ավագ գիտական աշխատող, 1987-ին վերաորակավորվել որպես առաջատար գիտաշխատող, իսկ 1991-ին՝ գլխավոր գիտաշխատող:

1979-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդում նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» թեմայով, և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան: 1995-ից նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում ստեղծված՝ արվեստագիտության բնագավառում գիտական աստիճանաշնորհման միակ՝ 016 մասնագիտական խորհրդի նախագահն է: 2003-ին նրան շնորհվել է «Արվեստագիտություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: 2004-ից նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչն է: 2006-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ծանրակշիռ է վաստակաշատ գիտնականի ներդրումը թատերագիտության երեք՝ թատրոնի պատմության, թատրոնի տեսության և թատերական քննադատության ասպարեզներում:

Հայ թատրոնի պատմության բնագավառում իր աշխատություններով նա գիտական ամուր հիմքերի վրա դրեց հին և միջնադարյան թատրոնի ուսումնասիրության գործը:

Քննության առնելով հայ հնագույն դրամայի ծագման հարցը՝ թատրոնի պատմաբանը բացահայտեց նրա նշանակությունն ընդհանուր թատրոնի պատմության տեսակետից: Հենվելով հայ մատենագրության և բանահյուսության տվյալների վրա՝ Հ. Հովհաննիսյանը զարգացրել է արևապաշտական տեսությունը՝ կապված շղթայվածի առասպելի և տարեկապի խորհրդապաշտական արարողության՝ Նավասարդի հետ: Գիտնականը սա համարում է թատրոնի հին շրջանի ուսումնասիրության մեջ իր ամենալուրջ հայտնությունը, և եթե դրամայի վաղ պատմության մեջ հայտնի է «սիդերական միստերիա» հասկացությունը, ապա հայագետի համոզմամբ հայ առասպելաբանության մեջ այդ միստերիայի գլխավոր պերսոնաժը Շիդարն է: Շիդարը զուգահեռվում է հայ հին վիպասքի Արտավազդի և «Սասնա ծռերի» Միհրի հետ:

Հետազոտելով հայ միջնադարյան թատրոն երևույթը՝ Հ. Հովհաննիսյանը «Պատարագի» օրինակով պարզել է հայ եկեղեցական արարողության դրամատիկական բնույթը և ապացուցել, որ Բարսեղ Կեսարացու «Պատարագը» անտիկ ողբերգության մետամորֆոզն է՝ փոխակերպումը:

«Թատրոնը միջնադարյան Հայաստանում. պատմության և տեսության հարցեր» աշխատության մեջ (1978), ինչպես նկատել է ակադեմիկոս Արամ Ղանալանյանը, հեղինակը ցույց է տվել, որ այդ թատրոնն ունի շատ ավելի խոր և բուն ազգային արմատներ, որոնք սերում են ժողովրդական բանարվեստի ակունքներից, բացահայտել է հայ միջնադարյան թատրոնի ուսումնասիրության պատմագեղագիտական հիմքերը, բանահյուսական ու կրոնաաշխարհայացքային ակունքները, վերականգնել նրա մոտավոր պատկերը, որոշել այդ թատրոնի գեղարվեստական առանձնահատկությունները, նրա տեղը միջնադարյան աշխարհայեցողության համակարգում՝ հայկական վաղ և դասական միջնադարի թատրոնը դիտելով թատրոնի համընդհանուր պատմության լայն շրջանակում:

Հ. Հովհաննիսյանը ճշտել է թատրոն և եկեղեցի հարաբերության հարցը՝ բացատրելով հայ եկեղեցու թատրոնամերժ դիրքը միջնադարում: Ըստ վաստակաշատ հայագետի՝ դա կապված է անտիկ թատրոնի վերասերման հետ, և մերժումն սկսվել է նախաքրիստոնեական շրջանից:

«Միջնադարյան բեմ. Թատրոն-եկեղեցի հարաբերությունը և հայ հոգևոր դրաման» աշխատության մեջ (2004) Հ. Հովհաննիսյանը ցույց է տվել լիթուրգիական դրամայի ենթադրելի դրսևորումները՝ սկսած 12-րդ դարից (Ներսես Լամբրոնացի՝ «Համբարձման ներբողեան»), ապա Ծննդյան և Զատկական ցիկլերի դրամատիզմը:

Թատրոնի պատմաբանն առաջին անգամ շարադրել է 19-րդ դարի հայ թատրոնի պատմությունը՝ արևելահայ ու արևմտահայ թատրոնները դիտելով որպես միասնության ձգտող զուգահեռ երևույթներ: Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի դիպուկ գնահատմամբ՝ «Կարդում ենք արևմտահայ թատրոնի մասին և տեսնում ենք, որ նրա կողքին ներկա է արևելահայը, կարդում ենք արևելահայի մասին, զգում ենք արևմտահայի ներկայությունը»:

Իր ուսումնասիրության առանցքում, որի կենտրոնական դեմքն ու գլխավոր հերոսը Պետրոս Ադամյանն է, Հ. Հովհաննիսյանը դրել է դերասանական անհատներին (19-րդ դարի թատրոնը Հ. Հովհաննիսյանի գնահատմամբ դերասանական անհատների թատրոն է) և դիտել հայ թատրոնը ռուսական և եվրոպական թատրոնների պատմության համատեքստում:

Թատրոնի տեսության ասպարեզում երիտասարդ հետազոտողի կարևոր ներդրումը դարձավ մեզանում բեմական խոսքի պոետիկայի համակարգման առաջին փորձը՝ «Բեմական խոսքի պոետիկան» մենագրությունը (1973), որտեղ արծարծվում են բեմական խոսքին ու դերասանի արվեստին վերաբերող տեսական-գեղագիտական հրատապ խնդիրները: Աշխատության մասին ակադեմիկոս Ռուբեն Զարյանը «Գրական թերթում» արձանագրեց, որ սրանով «մեզանում սկիզբ է դրվում բեմական խոսքի գիտությանը»:

«Դերասանի արվեստի բնույթը» աշխատությանը (2002) հաջորդեց Ստանիսլավսկու սիստեմի քննական դիտումը (2012), որտեղ հեղինակը սահման է դրել կիրառական հոգեբանության և խաղի գեղագիտության միջև:

Շարունակելով իր տեսական զննումները՝ «Սուրեն Քոչարյանի գրական բեմը» էսսեում (2016) Հ. Հովհաննիսյանը քննության է առել գրական բեմի նշանավոր դերասան Սուրեն Քոչարյանի արվեստը՝ դերասանին ներկայացնելով գրականագետ արտիստի առանձնահատուկ նկարագրով, որպես «մի դերասանի թատրոնը» կատարելության հասցնող արվեստագետի: Մենագրության մեջ հեղինակը նորովի է քննել բեմական արվեստի և գրական նյութի հարաբերությունը՝ այն, ինչը տարբեր հայեցակետերով դիտվել է հեղինակի նախորդ երկու՝ «Դերասանի արվեստի բնույթը» և «Ստանիսլավսկու սիստեմը և խաղի պարադոքսը» աշխատություններում:

Թատերական քննադատության ասպարեզում Հ. Հովհաննիսյանը հիսուն տարվա ընթացքում հանդես է եկել 48 հրապարակումներով, որոնցից յուրաքանչյուրում ներկայացրել է տվյալ ներկայացման հետ կապված որևէ հաստատական կամ մերժողական դրույթ: Եվ ինչպես խոստովանում է գիտնականը, քննադատությունն իր համար եղել է ոչ հիմնական զբաղմունք. «Հիմնականը եղել ու մնում է գիտական ուսումնասիրությունը»:

Գիտահետազոտական բեղմնավոր աշխատանքին զուգահեռ, տարիներ շարունակ Հ.Հովհաննիսյանը զբաղվել է թարգմանական ու բանաստեղծական գործունեությամբ, որի արդյունքները հրատարակվել են առանձին ժողովածուներով՝ «Ալեքսանդր Պուշկին (թարգմանություններ և առաջաբան)» (1999) և «Անդարձություն» (2014), որտեղ տեղ են գտել թարգմանություններ. Տյուտչև, Նադսոն, Բալմոնտ, Սևերյանին: «Սկեպսիս» խորագրով (2019) ժողովածուն ամփոփում է գիտնականի քառյակները:

Հ. Հովհաննիսյանի գիտական ու գիտակազմակերպական բեղմնավոր աշխատանքը հաջողությամբ զուգակցվել է մանկավարժական բազմարդյուն գործունեության հետ: Նա 1968-ից ընդհատումներով, ավելի քան կես դար դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ղեկավարել ասպիրանտների և մագիստրանտների գիտական աշխատանքները, կազմել հայ թատրոնի պատմության ծրագիրը (2015): Եվ պատահական չէ, որ իր «Դերասանի ինքնաճանաչումը» աշխատությունը նվիրել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտին:

Ծանրակշիռ է Հ. Հովհաննիսյանի ներդրումը երիտասարդ կադրերի պատրաստման գործում. ղեկավարել է թեկնածուական շուրջ քսան ատենախոսություն:

Հ. Հովհաննիսյանի գիտաստեղծագործական դիմանկարն ուրվագծելիս անհրաժեշտ է անդրադառնալ նրա գիտալուսավորչական գործունեությանը ևս, որը սերտորեն կապված է հեռուստատեսության հետ: Հ. Հովհաննիսյանը 1990-1991 թթ. եղել է ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նախագահը, իսկ 2001-ին ՀՀ նախագահի հրամանով նշանակվել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ:

Հեռուստատեսությամբ մոտ երեսուն տարի շարունակ նա վարել է տարբեր հաղորդաշարեր՝ «Մեր լեզուն մեր հայրենիքն է», «Հոգևոր հայրենիք», «Արվեստն արվեստի համար», «Արվեստը և իրականությունը»: Վերջին շրջանում նա հեռուստադիտողին է ներկայանում «Արվեստագիտության լսարան» հաղորդաշարով:

Գիտական արգասաբեր գործունեության համար վաստակաշատ արվեստագետը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով և այլ պարգևներով:

Այսօր էլ հայ թատերագիտության պատրիարք Հենրիկ Հովհաննիսյանը շարունակում է իր գիտաստեղծագործական, գիտամանկավարժական, գիտալուսավորչական ու հասարակական գործունեությունը: Հոբելյանին ընդառաջ հրատարակվեց նրա «Գեղարվեստական ձևերի բովանդակությունը» աշխատությունը:

Մաղթում ենք մեր գործընկերոջը արևշատություն, անսպառ եռանդ և գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ՝ հանուն հայ արվեստագիտության և հայագիտության առաջընթացի:

Արվեստի ինստիտուտ

Գիտական սրճարանի ինտերակտիվ միջավայրում երիտասարդները ծանոթացան Հայաստանում իրականացվող գենետիկական ուսումնասիրություններին

Գիտությունը դուրս էր եկել լաբորատորիայից և տեղափոխվել սրճարան:

Հուլիսի 3-ին «The Academy People»-ում անցկացված «Գենետիկան Հայաստանում. այսօր և վաղը» գիտական սրճարանի (Science Cafe) ձևաչափով հանդիպմանը գենետիկայի ոլորտի գիտնականները ներկայացրին Հայաստանում իրականացվող գենետիկական ուսումնասիրությունները:

Միջոցառումը վարեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը: «Հայաստանն ունի ամուր գիտական ներուժ մոլեկուլային կենսաբանության, մոլեկուլային գենետիկայի, գենոմիկայի, գենետիկական ճարտարագիտության և էկոլոգիական գենետիկայի ոլորտներում»,- ասաց Ռուբեն Հարությունյանը՝ կարևորելով Հայաստանի և արտերկրի գիտական կառույցների միջև ձևավորված ակտիվ գործընկերությունն ու համատեղ հետազոտական ծրագրերը:

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը ներկայացրեց հայկական գենոմի ուսումնասիրությունները, որոնք ավելի քան երկու տասնամյակ իրականացվող գիտական հետազոտությունների արդյունք են: Նա անդրադարձավ հայկական բնակչության գենետիկական առանձնահատկություններին, ծագումնաբանական հետազոտություններին և բացատրեց, թե ինչպես են գենոմային ուսումնասիրություններն օգնում ավելի լավ հասկանալ հայ ժողովրդի պատմական ձևավորումն ու գենետիկական ժառանգությունը:

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Մարդու գենոմիկայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող Ռոքսանա Զախարյանը խոսեց մի շարք կարևոր նախագծերի մասին, այդ թվում՝ AMADEE 24 Մարսի անալոգային առաքելության շրջանակում իրականացված ուսումնասիրությունների, Միջերկրածովյան ընտանեկան տենդի գենետիկական հետազոտությունների և գենոմի խմբագրման ժամանակակից տեխնոլոգիաների ու դրանց զարգացման հեռանկարների:

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Բույսերի գենոմիկայի խմբի ղեկավար, ավագ գիտաշխատող Քրիստինե Մարգարյանը ներկայացրեց Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրության արդյունքները: Նա ընդգծեց, որ այս հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն տեղական խաղողի սորտերի պահպանման, գենետիկական բազմազանության գնահատման, արժեքավոր գենետիկական ռեսուրսների բացահայտման համար:

«Գենետիկան Հայաստանում. այսօր և վաղը» ինտերակտիվ հանդիպումն անցկացվեց «Եվրոպական հետազոտողների գիշեր Հայաստանում (European Researchers' Night in Armenia (ERNA)» նախագծի շրջանակում, որն իրականացվում է Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» (MSCA) ծրագրի շրջանակում: Նախագծի գործընկերներն են ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» (ԳՆԳԱԿ) հիմնադրամը, «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ը, «Ձեռնարկությունների ինկուբատոր» (EIF) հիմնադրամը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Միջազգային բարձր պարգև հայ գիտնականին

ՌԴ ԳԱ պրոֆեսոր Արտեմ Օհանովն արժանացել է Չինաստանի գիտության և տեխնոլոգիաների ոլորտի միջազգային պետական մրցանակին

«Forbes» ամսագրի կողմից «Աշխարհը նվաճած 50 ռուսաստանցիների» ցանկում ընդգրկված աշխարհահռչակ գիտնական, քիմիկոս-բյուրեղագետ Արտեմ Օհանովը դարձել է Չինաստանի գիտության և տեխնոլոգիաների ոլորտի միջազգային պետական մրցանակի ամենաերիտասարդ դափնեկիրը: Մրցանակը նրան անձամբ հանձնել է ՉԺՀ նախագահ Սի Ցինփինը: Այս մասին Օհանովը հայտնել է տելեգրամյան իր ալիքում:

«Քիչ առաջ Պեկինում անձամբ Սի Ցինփինից ստացա Չինաստանի գիտության և տեխնոլոգիաների ոլորտի միջազգային պետական մրցանակը: Այն շնորհվում է երկու տարին մեկ անգամ՝ առավելագույնը 10 դափնեկրի (այս տարի՝ 9): Նախորդ տարիների մրցանակակիրների թվում բազմաթիվ մեծանուն գիտնականներ են եղել, այդ թվում՝ Նոբելյան մրցանակի վեց դափնեկիր, ինչպես նաև ամերիկացի ֆիզիկոս Շաուչեն Չժանը, որը համարվում էր Նոբելյան մրցանակի ամենահավանական թեկնածուներից մեկը»,- նշել է նա:

Մեծանուն գիտնականը հաճախակի է լինում Երևանում և սերտ կապեր պահպանում հայ գիտնականների հետ:

AlphaNews.Live , 10.07.2026

Երիտասարդ գիտնականի ամբիոն

Սոնա Բարսեղյան

Ծանր մետաղներով աղտոտված ջրերի մաքրման համար նոր ուղիներ է փնտրում երիտասարդ գիտնական Սոնա Բարսեղյանը: Նա աշխատում է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում՝ հանքային հումքի կենսամշակման, մետաղների վերականգնման և միջավայրի պաշտպանության լաբորատորիայում: Հետազոտության նպատակն է մշակել «կանաչ» կենսատեխնոլոգիաներ, որոնք կօգնեն մանրէների միջոցով մաքրել ծանր մետաղներով աղտոտված թափոնաջրերը:

ԵՊՀ-ն ավարտելուց հետո Սոնան ուսումը շարունակել է Ֆրանսիայի Բուրգոն-Ֆրանշ-Կոնտի համալսարանում՝ կրկնակի դիպլոմի մագիստրոսական ծրագրով: Գենետիկայից մանրէաբանության անցումը հեշտ չէր. անհրաժեշտ էր կարճ ժամանակում յուրացնել նոր գիտելիքներ և աշխատել նոր կրթական միջավայրում: Սակայն հենց այդ փորձառությունն ընդլայնեց նրա մասնագիտական հմտություններն ու գիտական հետաքրքրությունների շրջանակը:

Այսօր Սոնա Բարսեղյանի հետազոտությունների առանցքում մանրէներն են, որոնք կարող են դառնալ բնապահպանական խնդիրների լուծման կարևոր գործիք: «Հետազոտության նպատակն է կենսասորբցիայի և կենսակլանման գործընթացների հիմքի վրա մշակել «կանաչ» տեխնոլոգիաներ՝ մետաղներով աղտոտված թափոնաջրերի կենսավերականգնման համար՝ կիրառելով մանրէների կենդանի և չոր կենսազանգվածը: Առաջին քայլով փորձում ենք հանքավայրերի թթու հանքային դրենաժներում և աղտոտված ջրերի նմուշներում հայտնաբերել և մեկուսացնել այնպիսի մանրէներ, որոնք կարող են կլանել շրջակա միջավայրի և մարդու առողջության համար մեծ վտանգ ներկայացնող ծանր մետաղները: Վերջին աշխատանքներից ամենահետաքրքիրն այն էր, որ հանքավայրերից վերցրած նմուշներից հաջողվեց մեկուսացնել խմորասունկ, որն ունակ էր արդյունավետ կլանելու ծանր մետաղները: Այդ աշխատանքի արդյունքում նաև տպագրվեց գիտական հոդված միջազգային տեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրում: Ինձ համար մեծ ձեռքբերում կլիներ, եթե իմ կողմից մշակված մոտեցումը կիրառություն գտներ նաև լաբորատորիայից դուրս՝ նպաստելով բնապահպանական խնդիրների համալիր լուծմանը Հայաստանում»,- ասում է Սոնա Բարսեղյանը:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից տրամադրված դրամաշնորհային ծրագրի շրջանակում Սոնան մեկ ամիս աշխատել է Իսպանիայում՝ Մադրիդի Կոմպլուտենսի համալսարանում, որտեղ խորացրել է գիտելիքները մանրէների կողմից իրականացվող կենսասորբցիայի և կենսակլանման ուսումնասիրության ոլորտում: «Նման փորձառությունները ոչ միայն նոր գիտելիք են տալիս, այլև հնարավորություն են ստեղծում հայկական գիտությունը կապելու միջազգային գիտական համայնքի հետ»,- նշում է Սոնա Բարսեղյանը:

Լաբորատորիայից դուրս Սոնան բոլորովին այլ աշխարհ ունի. նվագում է դաշնամուր, ինքնուրույն սովորել է կիթառ և ուկուլելե նվագել, ստեղծագործում է, երգեր գրում, սիրում է ընթերցել ու ֆիլմեր դիտել: Համալսարանական տարիներին զբաղվել է նաև կամավորությամբ՝ համոզված լինելով, որ հասարակական ակտիվությունն ու գիտությունը կարող են լրացնել միմյանց:

«Անգամ անհաջողությունը կարող է դառնալ նոր գիտելիքի և հետագա հաջողությունների հիմք,- ասում է Սոնա Բարսեղյանը՝ այս միտքը համարելով այն կարևոր խորհուրդը, որը կփոխանցեր գիտությամբ հետաքրքրվող յուրաքանչյուր երիտասարդի,- նաև խորհուրդ կտամ զինվել համբերությամբ, լինել համառ, չվախենալ փորձել նորը և պահպանել հետաքրքրասիրությունը: Աշխարհում ամեն ինչ հարաբերական է, և այն, ինչն այսօր խոչընդոտ է թվում, կարող է հետագայում արժեքավոր փորձառություն դիտվել»:

Մոնիկա ԵՐԻՑՅԱՆ

Արևելագիտության ինստիտուտում արժևորվեց եգիպտահայ նշանավոր ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանի ստեղծագործական ժառանգությունը

Վերջերս Արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ «Երկու հայրենիքների միջև. Ալեքսանդր Սարուխանը և հանրային դիվանագիտության ուժը» խորագրով միջոցառում՝ նվիրված եգիպտահայ նշանավոր ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանի հիշատակին:

Միջոցառմանը մասնակցեցին հայ և եգիպտացի պատմաբաններ, մշակույթի գործիչներ, հետազոտողներ, լրագրողներ և դիվանագետներ: Հատուկ հյուրն էր Ալեքսանդր Սարուխանի թոռնուհին՝ Սիլվա Ներետյան-Բլատյանը:

Ողջունելով մասնակիցներին՝ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պ.գ.թ., դոցենտ Գոհար Իսկանդարյանը նշեց, որ այս միջոցառումը հնարավորություն է՝ նորովի բացահայտելու Ալեքսանդր Սարուխանի հարուստ ստեղծագործական ժառանգությունը:

Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ամալ Աֆիֆին իր ողջույնի խոսքում նշեց, որ Ալեքսանդր Սարուխանը Եգիպտոսում ծաղրանկարչության մեծագույն և ամենահայտնի վարպետներից էր: Նրա ստեղծագործությունները երկու ժողովուրդների միջև մշակութային կապերի և բարեկամության խորհրդանիշ են:

«Մեր ժողովուրդներին միավորում է քաղաքակրթական այն ընդհանուր միջավայրը, որտեղ նրանք ձևավորվել, զարգացել և դարերի ընթացքում ամրապնդել են իրենց բարեկամական կապերը: Մենք պետք է առավել մեծ ուշադրություն դարձնենք այն կամուրջներին, որոնք միավորում են նրանց: Այդ կարևոր կամուրջներից մեկը Ալեքսանդր Սարուխանն է»,- ասաց Արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Արաքս Փաշայանը:

Ալեքսանդր Սարուխանի թոռնուհի Սիլվա Ներետյան-Բլատյանը, որը զբաղվում է պապի ստեղծագործական ժառանգության պահպանմամբ և հանրայնացմամբ, ներկայացրեց անվանի ծաղրանկարչի կյանքն ու ստեղծագործական ուղին՝ անդրադառնալով նրա արվեստի առանձնահատկություններին և թողած հարուստ ժառանգությանը:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին Ալեքսանդր Սարուխանի ստեղծագործությունները, արժևորվեց նրա արվեստի բացառիկ դերը հայ երգիծանկարչության զարգացման գործում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Հայ ժողովրդի մեծանուն զավակը

Աղասի Խանջյան. ողբերգական ֆենոմեն, 6-ամյա հանճարեղ կառավարում



20-րդ դարի հայոց պատմության ամենաբարդ, հակասական և միևնույն ժամանակ դրամատիկ էջերը կապված են խորհրդային ժամանակաշրջանի, մասնավորապես 1930-ական թվականների ստալինյան բռնապետության հաստատման հետ: Այդ դարաշրջանը ծնեց առաջնորդների նոր տեսակ, որոնք ստիպված էին քայլել ածելու սայրի վրայով՝ մի կողմից հավատարիմ մնալով համաշխարհային պրոլետարական հեղափոխության կոշտ գաղափարախոսությանն ու կենտրոնի (Մոսկվայի) հրահանգներին, մյուս կողմից՝ փորձելով փլատակներից հառնող հայրենիքի համար ստեղծել զարգացման ու գոյատևման հնարավորություններ: Այս համատեքստում Աղասի Խանջյանի կերպարը ոչ միայն առանձին պետական-կուսակցական գործչի կենսագրություն է, այլև հավաքական ողբերգություն, որն արտացոլում է ամբողջատիրական համակարգի ներսում ազգային ինքնության պահպանման դժվարին, գրեթե անհնարին առաքելությունը:

Խանջյանը Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը ստանձնեց 1930 թվականին՝ մի ժամանակահատվածում, երբ երկիրը դեռ չէր ապաքինվել Առաջին աշխարհամարտի, ցեղասպանության և քաղաքացիական կռիվների վերքերից: Նրա 6-ամյա կառավարումը դարձավ աննախադեպ շինարարության, մշակութային վերածննդի, բայց նաև անձնական ու քաղաքական խոր դրամայի շրջան: Խանջյանը համոզված կոմունիստ էր. անդամագրվել էր կուսակցությանը պատանի տարիքում, անցել հեղափոխական ընդհատակի բովով Վանում, Թիֆլիսում և Լենինգրադում: Սակայն, ի տարբերություն շատերի, նրա համար Խորհրդային Հայաստանը լոկ վարչական միավոր չէր, այլ հայության վերջին հանգրվանն ու տունը: Խանջյանի կառավարման ռազմավարությունը հիմնված էր նուրբ ու վտանգավոր հաշվարկի վրա՝ ցույց տալ Մոսկվային, որ Հայաստանը տնտեսապես և գաղափարապես ամենահավատարիմ հանրապետություններից է, որպեսզի այդ հավատարմության դիմաց կորզի ներքին ինքնավարության որոշակի սահմաններ: 1933-ի իր ելույթներից մեկում նա պատկերավոր ձևակերպել է իր կրեդոն. «Մենք պետք է կառուցենք մեր սոցիալիստական տունը, բայց այդ տան պատերը պետք է շարվեն հայկական տուֆով, և այնտեղ պետք է լսվի հայերեն խոսքը»:

Այս մոտեցման շնորհիվ էր, որ Խանջյանի օրոք կոլեկտիվացման և ինդուստրացման կոշտ գործընթացները Հայաստանում ընթացան համեմատաբար մեղմ ու նվազ արյունալի, քան Ուկրաինայում կամ Ղազախստանում: Նա ամեն կերպ փորձում էր մեղմել կենտրոնից եկող հարվածները՝ մանևրելով և անձնական պատասխանատվություն վերցնելով սեփական ժողովրդի համար: Եթե տնտեսության մեջ Խանջյանը ստիպված էր հետևել պլանային համակարգի կոշտ կանոններին, ապա մշակույթի և կրթության ոլորտում նա ցուցաբերեց բացառիկ ազգային կողմնորոշում: 1930-ականների առաջին կեսին Երևանը դարձավ հայ մտավորականության հավաքագրման կենտրոն: Խանջյանը հստակ գիտակցում էր, որ առանց հզոր մշակութային էլիտայի պետությունն ապագա չի ունենա: Նրա անմիջական հովանավորությամբ և պաշտպանությամբ էին ստեղծագործում Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Թամանյանը: Խանջյանի և Չարենցի հարաբերությունները դուրս էին պաշտոնական կամ կուսակցական շրջանակներից: Դա երկու բացառիկ անհատների դաշինք էր, որտեղ քաղաքական գործիչը հասկանում էր հանճարի արժեքը, իսկ պոետը՝ քաղաքական գործչի առաքելության ծանրությունը: Երբ Չարենցը հայտնվում էր հարվածների տակ, երբ պրոլետարական գրողները նրան մեղադրում էին «նացիոնալիզմի» և «բուրժուական մնացուկ» լինելու մեջ, Խանջյանն օգտագործում էր իր ողջ հեղինակությունը՝ բանաստեղծին «փրկելու» համար: Այս հովանավորչությունը տարածվում էր նաև ճարտարապետության վրա: Ալեքսանդր Թամանյանի նախագծած Երևանը՝ իր ազգային էլեմենտներով և վարդագույն տուֆով, մեծապես կյանքի կոչվեց Խանջյանի քաղաքական կամքի շնորհիվ: Կենտրոնից եկող մեղադրանքներին, թե Թամանյանի նախագծերը չափազանց թանկ են և «արխաիկ», Խանջյանը հպարտորեն պատասխանում էր, որ հայերը կառուցում են դարերի համար:

Խանջյանի ղեկավարման կարճ շրջանը դարձավ Խորհրդային Հայաստանի թռիչքային արդիականացման և ինդուստրիալ-մշակութային հեղափոխության ամենաարգասաբերը: Երկիրը կիսավեր, ագրարային ծայրամասից վերածվեց հզոր արտադրական ու գիտական կենտրոնի: Նրա նախաձեռնությամբ կյանքի կոչվեց Թամանյանի հանճարեղ «Կանաչ քաղաք» գլխավոր հատակագիծը, հիմնադրվեցին Օպերայի և բալետի թատրոնի, կառավարական շենքերը, կառուցվեցին Քանաքեռ հէկ-ը, Չորագետի հիդրոէլեկտրակայանը (Չորահէկ-ը), սկիզբ դրվեց «Նաիրիտի», Արարատի ցեմենտի գործարանի, Կիրովականի քիմկոմբինատի հիմնադրմանը, Ալավերդու պղնձաձուլական արդյունաբերության հզորացմանը: Կրթական ու մշակութային ոլորտում հիմնադրվեցին Երևանի պետական կոնսերվատորիան, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, Կուլտուրայի պատմության ինստիտուտը, Պետական պատկերասրահը, բացվեցին հարյուրավոր նոր դպրոցներ ու գրադարաններ: Նրան հաջողվեց հայրենիք վերադարձնել աշխարհասփյուռ հայ մտավորականության սերունդը, որն ապահովեց հայոց ազգային գենոֆոնդի ու ինքնության հարատևումը հետագա տասնամյակների համար:

Խանջյանի գործունեության ամենաքիչ լուսաբանված, բայց ամենաարժեքավոր էջերից մեկը կապված է հայկական տարածքների պահպանման և վերադարձի ջանքերի հետ: Նա բացահայտորեն դեմ էր 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով գծված սահմաններին: 1930-ականների կեսերին նա պաշտոնական նամակներով և զեկուցագրերով դիմեց Մոսկվային՝ հիմնավորելով, որ Լեռնային Ղարաբաղի տնտեսական և մշակութային կապերը շատ ավելի սերտ են Երևանի, քան Բաքվի հետ, և բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են: Ավելին, Ստալինի հետ անձնական հանդիպումների ժամանակ նա համարձակություն ունեցավ ուղղակիորեն բարձրացնելու ԼՂԻՄ-ը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցը: Այս քայլը բացահայտ մարտահրավեր էր Լավրենտի Բերիային, որն այդ ժամանակ Անդրկովկասի երկրկոմի առաջին քարտուղարն էր և վարում էր ընդգծված հակահայկական քաղաքականություն: Խանջյանի այս կուրսը նրան դարձրեց թիրախ: Թիֆլիսում գտնվող Անդրկովկասի ղեկավարությունը նրա մեջ տեսնում էր վտանգ, որը կարող է արթնացնել ազգային-ազատագրական գաղափարները տարածաշրջանում:

...1936 թվականի հուլիսի սկիզբ. հայոց պատմության ամենամռայլ էջերից մեկի մեկնարկն էր: Աղասի Խանջյանին կանչեցին Թիֆլիս՝ Անդրկովկասյան երկրկոմի նիստին: Օդում արդեն զգացվում էր մեծ տեռորի շունչը: Բերիան արդեն հավաքել էր «ապացույցներ» Խանջյանի «նացիոնալիստական հակումների» և «չարենցյան խմբակի» հետ կապերի մասին: Հուլիսի 9-ին Բերիայի աշխատասենյակում հնչած կրակոցներն ընդհատեցին 35-ամյա ղեկավարի կյանքը: Պաշտոնական վարկածը՝ ինքնասպանություն, հնչում էր որպես ծաղր: Ոչ ոք չէր հավատում, որ կենսախինդ, ուժեղ, հաստատակամ Խանջյանը կարող էր ինքնասպան լինել Թիֆլիսում՝ իր քաղաքական ոխերիմ հակառակորդի կաբինետում: Ժամանակակիցներն իրենց հուշերում գրում էին. «Նա չսպանեց իրեն: Նրան սպանեց այն համակարգը, որին նա ծառայում էր, բայց որի կանոններով չկարողացավ խաղալ մինչև վերջ, որովհետև սիրտը հայերեն էր բաբախում»:

Խանջյանի մահն ահռելի հարված էր Հայաստանին: Չարենցը, լսելով այդ գույժը, կատարեց իր կյանքի ամենահամարձակ և ողբերգական քայլը. գրեց իր հանճարեղ սոնետաշարը՝ «Դոֆին նաիրական»-ը, որտեղ տողերի արանքում մեղադրում էր Բերիային սպանության մեջ: Բանաստեղծը հավանաբար գիտակցում էր, որ դրանով ստորագրում է նաև իր մահվան դատավճիռը: Խանջյանի հուղարկավորությունը Երևանում վերածվեց համազգային սգի և լուռ, ահազդու բողոքի ցույցի: Մարդիկ հասկանում էին, որ Խանջյանի հետ մեռնում է իրենց անվտանգության և մշակութային ազատության վերջին պատվարը: Եվ իրոք, նրա մահից ամիսներ անց սկսվեց հայ մտավորականության հունձը. ձերբակալվեցին ու սպանվեցին Բակունցը, Չարենցը, Թոքվենցը և հազարավոր ուրիշներ: Խանջյանը նման էր այն ճարտարապետին, որը փորձում էր տաճար կառուցել գործող հրաբխի վրա: Նա գիտեր, որ լավան վաղ թե ուշ ծածկելու է ամեն ինչ, բայց շարունակում էր խնամքով հղկել յուրաքանչյուր քարը, որովհետև հավատում էր՝ հրաբուխը կհանգչի, իսկ քարե մատյանը կմնա: Խանջյանի թաղումն անշուք էր, հետո նրա անունը տասնամյակներով հանվեց պատմության դասագրքերից: Սակայն նրան ջնջել ժողովրդի հիշողությունից՝ չհաջողվեց...

Հետգրության փոխարեն: Այս տարի մեկտեղվել են երկու խորհրդավոր տարեթվեր՝ Աղասի Խանջյանի ծննդյան 125-ամյա հոբելյանը և նրա ողբերգական մահվան 90-րդ տարելիցը: Ղեկավարելով Խորհրդային Հայաստանը ընդամենը 6 տարի՝ նա կարողացավ անել անհնարինը: Ճիշտ 125 տարի առաջ նա լույս աշխարհ եկավ պատմական Վանում՝ իր հետ բերելով հին նաիրցիների կամքն ու ոգին, և ուղիղ 90 տարի առաջ նրա սիրտը դադարեց բաբախել: Մեծն Չարենցն անդառնալի կորստի ու կատաղի ցավի այդ օրերին նրան կոչեց «Նաիրյան Դոֆին»՝ ազնվացեղ արքայազն, որն այդպես էլ չբազմեց երկրային գահին, բայց ընդմիշտ մնաց իր ժողովրդի հիշողության մեջ: Այս անդրադարձը խոնարհումի և երախտագիտության տուրք է այն բացառիկ հայորդուն ու պետական գործչին, որն ապրեց ընդամենը 35 տարի, բայց սեփական կյանքի գնով կերտեց մի ողջ դարաշրջան՝ ապրելով ակնթարթային, բայց լուսավոր կյանք՝ իրենից հետո թողնելով անջնջելի կոթող՝ վերածնված հայրենիքը:

Աղասի ՂՈՐԽՄԱՋՅԱՆ (hraparak.am 2.07.2026)

Եզակի և ուշագրավ ստեղծագործական նախագիծ

Խմբագրության կողմից. երիտասարդ կինոռեժիսոր և կոմպոզիտոր, բազմաթիվ միջազգային ու տեղական մրցույթների դափնեկիր, ՀՀ կինոգործիչների միության անդամ, ՀՀ Նախագահի երիտասարդական մրցանակի դափնեկիր Մաննեն (Մանե Բաղդասարյան) վերջերս խմբագրություն էր ներկայացրել իր ստեղծագործական վերջին նախագիծը՝ «Պարբերական աղյուսակի տարրերը» երաժշտական մոզաիկան, որը Մենդելեևի պարբերական աղյուսակի բոլոր տարրերը ներկայացնում է ինքնուրույն դասական երաժշտական ստեղծագործությունների միջոցով: Այս նախագծով նա վերջերս մասնակցել և հաղթող է ճանաչվել Մեծ Բրիտանիայում անցկացվող միջազգային երաժշտական առցանց մրցույթում: Հաշվի առնելով նախագծի խիստ ինքնատիպությունը՝ հարկ ենք համարում այն ներկայացնել գիտական հանրությանը:

«Երաժշտական պարբերական աղյուսակ»

Նախագծի հիմնական նպատակը գիտության նկատմամբ հետաքրքրություն և սեր սերմանելն է արվեստի լեզվով: Այն ձևավորում է արտահայտման նոր համակարգ, որտեղ երաժշտությունն ու գիտությունը միավորվում են՝ ստեղծելով գիտական գաղափարների գեղարվեստական մեկնաբանության յուրօրինակ լեզու: Այս նախագծին անդրադարձել են միջազգային և տեղական լրատվամիջոցները:

Սա նմանօրինակ առաջին նախագիծն է, որը ներկայացնում է քիմիական բոլոր 118 տարրերի ակադեմիական երաժշտական խճանկարը: Որպես հեղինակ՝ ես փորձել եմ ստեղծել օրինաչափությունների մոդել, ըստ որի՝ տարրերի քիմիական ու ֆիզիկական հատկություններն արտահայտվում են երաժշտության միջոցով: Ամեն տարրի համար ստեղծվում է անհատական կոմպոզիցիա, որը ներկայացնում է տվյալ տարրի կերպարը երաժշտության լեզվի միջոցով: Յուրաքանչյուր կոմպոզիցիա ընկալվում է թե՛ որպես խճանկարի մաս, թե՛ որպես անկախ ստեղծագործություն: Խճանկարը, ինչպես և մեզ հայտնի Մենդելեևի պարբերական համակարգը, բաղկացած է խմբերից, պարբերություններից: Ինքս առանձնացրել եմ օրինակ «Սինթետիկ ռադիոակտիվ տարրերը»՝ որպես դաշնամուրային էտյուդների հավաքածու, ինչի վրա էլ աշխատում եմ այս պահին:

Ս. Ռախմանինովի անվան միջազգային առցանց մրցույթում 109-րդ տարրին նվիրված կոմպոզիցիան՝ «Մայտներիում»-ը, ստանձնեց առաջին հորիզոնականը: Նկատի են առնվել ստեղծագործության երաժշտական լուծումները, նորարարական մոտեցումը և գաղափարը: Այս նախագծին անդրադարձել են նաև միջազգային մամուլը, ամերիկյան երաժշտական պարբերականները: Ուղին դեռ նոր է, իսկ աշխատանքն ամեն օր կրկնապատկվում է: Սկզբում սա պարզապես արվեստի ստեղծագործություն էր, և որոշել էի, որ պիտի գրեմ միասնական ընկալվող մի գործ, առավելագույնը մեկական րոպե տևողությամբ պատկերներով: Ընթացքն իմ մեջ առաջացրեց բազմապիսի հարցեր, որոնց պատասխանելով՝ նախագիծն առավել գիտական ուղղություն որդեգրեց:

Հետազոտական ընթացքը և ստեղծագործական հատվածը միահյուսված են և լրացնում են մեկը մյուսին: Բնության մեջ, կյանքում, թատրոնում, երաժշտության մեջ, ինչպես և քիմիական ռեակցիաներում, ոչինչ չի կրկնվում նույնությամբ երկրորդ անգամ: Ընթացող պրոցեսների անկրկնելիությունն է, որ գրավեց իմ ուշադրությունը:

«Երաժշտական պարբերական աղյուսակ»-ի միտքն առաջացել է պարզապես որպես նախորդ՝ գիտական թեմաներով ստեղծագործությունների շարունակություն: Սրանից առաջ «Դիրակի հավասարումը» դուետն էր կոնտրաբասերի համար:

Այժմ տաղանդավոր դաշնակահարուհի Սոֆի Սուվարյանի հետ փորձեր ենք անում և պատրաստվում ենք ձայնագրել «Մայտներիում»-ը: Կատարողի մեկնաբանությունը շատ մեծ դեր ունի, քանի որ մենք գործ ունենք ժամանակակից երաժշտության հետ, որտեղ ընդգծված է ձայնի կարևորությունը: Կատարողին ավելորդ չծանրաբեռնելու համար ես շատ ազատ եմ արտահայտման նշանների հարցում (expression markings): Իմ նոտաներում կարելի է հանդիպել երբեմն՝ «ինչպես մարգարտյա անձրև», «ռոբոտային», «կենդանի» նշումներին, իսկ պարտիտուրում գրվում են տարրի ատոմային համարն ու սիմվոլը:

Նվագարանների ընտրությունը գեղարվեստական լուծում է՝ հիմնված որոշակի բնութագրերի վրա: Լուծումները ոչ միայն խմբային են, այլև շատ անհատականացված: Օրինակ, ռադիումը միակ տարրն է, որի համար ես գրել եմ ապակե հարմոնիկայի ֆանտազիա, իսկ ալյումին տարրի համար ստեղծել եմ կոնցերտինո ալյումինե թիթեղի համար, որտեղ օգտագործվում է իրական մետաղի ձայնը՝ որպես հարվածային նվագարանի էֆեկտ:

Այս ուղին ինձ շատ է ոգեշնչում: Ես այս նախագծից սովորում եմ էլ ավելի արժևորել այն տեղը, որտեղ ապրում եմ: «Արտեմիս 2, դեպի լուսին» առաքելության ժամանակ ես գրում էի Արծաթի երաժշտությունը՝ դասական կիթառի սյուիտը, և մինչև այժմ այս գործը լուսնի հետ եմ ասոցացնում: Դա այս շարքի ամենառոմանտիկ երաժշտությունն է, մնացյալի հանդեպ առավել խիստ եմ գտնվել: Կարծում եմ, որ ստեղծագործողի կամ հետազոտողի համար չկա ավելի բարձր զգացում, քան աշխարհը ճանաչելու նոր փորձառությունը, որով կուզեինք ծնվել: Սթիվեն Հոքինգի խոսքերից է՝ «Հավատացե՛ք գիտությանը, բայց մի՛ մոռացեք, որ նրա բոլոր առեղծվածները դեռ բացահայտված չեն»:

Մաննե
Կոմպոզիտոր, կինոռեժիսոր

Անվանի բանաստեղծուհին. Ալիսիա Կիրակոսյան

Այնպես ուզում եմ
Անունդ թողնել
Կեսգիշերային ավազի վրա,
Որ լուսաբացին
Նա արտացոլված լինի
ցողերում,
Մինչև քեզ հասնի
Ձայնիս մշուշով
պարուրված խոսքս...

2026 թ. հուլիսի 13-ին լրացավ սփյուռքահայ տաղանդաշատ բանաստեղծուհի, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Ալիսիա Կիրակոսյանի ծննդյան 90-ամյակը: Նա ծնվել է Արգենտինայի Կորդովա քաղաքում, ավարտել Բուենոս Այրեսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, տասը տարի փայլել թատրոնի բեմում: Իսպաներեն, անգլերեն և հայերեն լույս են տեսել Ա. Կիրակոսյանի տասնյակ բանաստեղծական ժողովածուներ: Նրա գրական վաստակին է նվիրված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի «Ալիսիա Կիրակոսյանի քնարերգությունը» աշխատությունը:

Ֆրանսիացի մեծ բանաստեղծ Ժակ Պրևերը նրան անվանել է «գիսավոր մի աստղ, մի արև, բանաստեղծության լավ մի պահ...», իսկ արգենտինացի գրող Խորխե Լուիս Բորխեսն ասել է. «Զգալի է, որ նա գրում է ճշմարտությունը»: Ալիսիա Կիրակոսյանի բացառիկ տաղանդի երկրպագուն էր հանճարեղ նկարիչ Պաբլո Պիկասոն, ով անձամբ նկարազարդել է նրա բանաստեղծական որոշ գրքեր:

Բանաստեղծուհին «Գերտարածական պոեզիայի» (Beyondism) գիտափիլիսոփայական-բանաստեղծական շարժման հիմնադիրն է (տեսությունը հրապարակվել է իսպաներեն, անգլերեն և հայերեն): 2009 թ. Ա. Կիրակոսյանի թեկնածությունը ներկայացվել է Նոբելյան մրցանակի:

1967 թ. նրա «Արմատ և էություն» գիրքը Վահագն Դավթյանի անզուգական թարգմանությամբ դարձավ հայ գրականության մնայուն արժեքը, որին հաջորդեց «Նամակ առ Հայաստան» գլուխգործոցը: Նրա բանաստեղծությունների հիման վրա ստեղծվել են գողտրիկ երգեր, որոնցից արժանահիշատակ է «Այնպես ուզում եմ» երգը (կոմպոզիտոր՝ Ռոբերտ Ամիրխանյան):

Գրականության բնագավառում ունեցած վաստակի համար Ալիսիա Կիրակոսյանին 2005 թ. շնորհվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում: Նա պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, Խաչատուր Աբովյանի անվան գրական մրցանակով: Անվանի բանաստեղծուհին վախճանվել է 2014 թ. Լոս Անջելեսում:

Խմբագրություն

Տեխնոլոգիական աշխարհը փոխած հայեր. Էվի Թևանյան



Սթիվ Ջոբս և Էվի Թևանյան

«Ես հայ եմ և իմ արմատները Հայաստանից են: 1900-ականների սկզբին իմ պապն ու տատը բնակություն են հաստատել Պորտլանդում: Հիշում եմ, որ հայրս և մայրս, երբ ինչ-որ բան էին ուզում թաքցնել մեզնից, հայերեն էին խոսում:

Հայրս շատ դժվար կյանքով է ապրել ԱՄՆ-ում: Տասը տարեկանում նա ամեն գիշեր ոտքով նավահանգիստ էր գնում՝ ձկնորսներից էժան ձուկ գնելու և քաղաքում վաճառելու: Իմ ծնողները մեծ դժվարությամբ են գումար հայթայթել մեր ուսման համար»: Սա հատված է մեր ժամանակների ամենատաղանդավոր ծրագրավորողներից մեկի՝ Էվի (Ավետիս) Թևանյանի տված հարցազրույցից:

Էվի Թևանյանը ծնվել է 1961 թ. ԱՄՆ Մեն նահանգի Ուեստբրուկ քաղաքում: Թևանյանը Ռոչեստրի համալսարանում ստացել է մաթեմատիկայի բակալավրի աստիճան, Կարնեգի-Մելլոն համալսարանում՝ մագիստրոսի և դոկտորի աստիճան համակարգչային գիտությունների ոլորտում: Կարնեգի-Մելլոնում Ռիչարդ Ռաշիդի հետ ստեղծել է Mach միկրոմիջուկը, որը հետագայում դարձավ NeXT օպերացիոն համակարգի և հետո միայն Mac OS X-ի հիմքը: Ավետիս Թևանյանը սկզբնապես աշխատել է NeXT Computer-ում, ապա Apple-ում՝ երկու դեպքում էլ Սթիվ Ջոբսի հրավերով: Սակայն միջուկի ստեղծումը Թևանյանի գլխավոր վաստակը չէր:

Այն բանից հետո, երբ Apple-ը գնեց NeXT-ը, է. Թևանյանը, որը Apple էր եկել Սթիվ Ջոբսի հետ, ծրագրային տեխնոլոգիաների բաժանմունքը գլխավորեց մինչև 2003 թ. հուլիսը: 2003 թ. Ավետիս Թևանյանը դարձավ Apple computer-ի ծրագրային ապահովման մշակման գծով փոխնախագահ: Նրա նախկին պաշտոնը զբաղեցրեց Բերտրան Սերլետը՝ Թևանյանի ենթական և գործընկերը դեռ 1989 թ.-ից NeXT-ի ժամանակներից:

Թևանյանը Apple-ում եղել է առաջին դեմքը Mac OS X օպերացիոն համակարգի մշակման ժամանակներ: Նա կարողացավ թողարկել Apple-ի նոր օպերացիոն համակարգը, մի խնդիր, որը մինչ այդ չէր կարողացել լուծել ոչ ոք: Հենց Ավետիս Թևանյանի ղեկավարելու տաղանդի շնորհիվ ժամանակին թողարկվեց «իններորդ» Mac OS-ի դասական վերջին տարբերակը: Երբ 2001-2003 թվականներին Microsoft-ի միակ օպերացիոն համակարգը Windows XP-ին էր, այդ ժամանակ լույս տեսան Mac OS X-ի երեք մեծ տարբերակներ՝ մեկը մյուսից ավելի արագ, ավելի լավ և հարմար: Թևանյանը սահմանեց Apple-ի ծրագրային ապահովման բարձր ստանդարտներ և ձևավորեց նրա զարգացման ընդհանուր գաղափարախոսությունը երկար տարիների համար:

United States v. Microsoft դատավարության ընթացքում Թևանյանը հանդես եկավ ԱՄՆ-ի իրավական դեպարտամենտի կողմից որպես վկա և ցուցմունքներ տվեց Microsoft-ի դեմ: 2006 թ. մարտի 31-ին Էվի Թևանյանը հեռացավ Apple-ից:

2006 թ. մայիսին Թևանյանը ընդգրկվեց Tellme Networks-ի տնօրենների խորհրդում, որը զբաղվում էր հեռախոսային ցանցերի ձայնային ծրագրերի մշակմամբ (գնվել է Microsoft-ի կողմից), այնուհետև Green Hills Software-ի ներդրվող համակարգերում:

2010 թ. հունվարի 12-ին Elevation Partners մասնավոր բաժնետիրական ընկերության կողմից հայտարարվեց, որ Թևանյանը ընդունվել է ընկերություն՝ որպես կառավարիչ-տնօրեն:

Խմբագրություն

Եփրատի գաղտնի անցյալը. գիտնականներն ապացուցել են, որ աստվածաշնչյան գետը ծագել է հսկա լեռնային լճերի ձեղքումից

Խոշոր երկրաբանական բացահայտումը գիտնականներին հնարավորություն է տվել նկարագրելու գետի պատմության նախկինում անհայտ մի գլուխ, որն անքակտելիորեն կապված է ամենահայտնի աստվածաշնչյան սյուժեներից մեկի հետ:

Ծննդոց գրքում Եփրատ գետը հիշատակվում է որպես Եդեմի պարտեզից՝ երկրային դրախտից բխող չորս ջրային ուղիներից մեկը, որտեղ, ըստ ավանդության, ապրել են Ադամն ու Եվան: Չնայած Եփրատի կենտրոնական դերին աստվածաշնչյան ավանդույթում և Միջագետքի հին քաղաքակրթությունների ձևավորման մեջ՝ գիտնականները երկար ժամանակ չէին կարող ճշգրիտ որոշել, թե ինչպես է հենց ծնվել այս գետը: Տասնամյակներ շարունակ նրա ծագման վկայությունները մնացել են թաքնված նստվածքային ապարների հզոր շերտերի տակ և աղավաղվել միլիոնավոր տարիների տեկտոնական տեղաշարժերից:

Այժմ հետազոտողները հայտարարում են, որ բացահայտել են այս գաղտնիքը՝ առաջին անգամ ամբողջությամբ վերակառուցելով այդ ջրային զարկերակի հին պատմությունը:

Հետազոտողների միջազգային խումբը վերականգնել է Եփրատի անցյալը՝ կիրառելով ժամանակակից մեթոդների համալիր՝ սեյսմիկ տոմոգրաֆիա, արբանյակային դիտարկումներ, երկրաբանական քարտեզագրում և Միջերկրական ծովի տակ թաղված հատակային նստվածքների վերլուծություն:

Վերլուծությունը ցույց է տվել, որ երբևէ ներկայիս Թուրքիայի և Սիրիայի տարածքով հոսել են միմյանցից անկախ երկու հսկայական գետեր, որոնք գիտնականներն անվանել են Պալեո-Կարասու (Paleo-Karasu) և Պալեո-Մուրատ (Paleo-Murat): Հզոր երկրաբանական գործընթացներն ի վերջո փոխել են դրանց հունը: Մոտ 1,6 միլիոն տարի առաջ այս ջրային ուղիները միավորվել են մեկ հոսքի մեջ և ուղղվել դեպի Պարսից ծոց՝ ձևավորելով ժամանակակից Եփրատը:

Եփրատն Արևմտյան Ասիայի ամենաերկար գետն է (մոտ 3000 կմ): Այն հոսում է Պտղաբեր մահիկով՝ տարածաշրջանով, որը հաճախ անվանում են մարդկության օրրան, քանի որ հենց այստեղ են ձևավորվել առաջին կազմակերպված հասարակությունները: Տիգրիսն ու Եփրատը ստեղծել են բերրի հողի օազիս չոր տարածաշրջանի մեջտեղում, ինչը շումերներին և ասորիներին օգնել է կառուցել իրենց քաղաքակրթությունը մոտ 6000 տարի առաջ:

Մինչև այժմ գետի ծագման տեսությունները ենթադրական բնույթի էին: Որոշ հետազոտողներ կարծում էին, որ Եփրատն առաջացել է մեկ առանձին գետից, որը թափվում էր անմիջապես Միջերկրական ծով կամ ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող հին լճեր: Մյուսները պնդում էին, որ գետի ակունքները տանում էին դեպի Արաբական թերակղզի:

Nature Geoscience ամսագրում հրապարակված նոր հետազոտությունը հնարավորություն տվեց որպես առ որպես (մոլորակային մասշտաբով) վերականգնելու գետի էվոլյուցիան:

Ավելի քան 16,5 միլիոն տարի առաջ մոլորակում հայտնվում է հին Պալեո-Մուրատ գետը:

8,6-ից 5,9 միլիոն տարի առաջ ձևավորվում է Պալեո-Կարասու գետը: Այս շրջանում երկու գետերն էլ թափվում էին միմյանց հետ թույլ կապված լճերի համակարգի մեջ՝ Հյուսիսանատոլիական խզվածքից հարավ, դեռևս ոչ մի կապ չունենալով Եփրատի համակարգի հետ:

Մոտ 5,3 միլիոն տարի առաջ տեղի է ունենում մասշտաբային երկրաբանական իրադարձություն, որը փոխեց ամբողջ Միջերկրածովյան տարածաշրջանը (Մեսինյան աղակալման գագաթնակետ): Ատլանտյան օվկիանոսի և Միջերկրական ծովի միջև կապը ներկայիս Ջիբրալթարի նեղուցի շրջանում արգելափակվել է, ինչի հետևանքով Միջերկրական ծովը գրեթե ամբողջությամբ ցամաքել է:

Երբ Միջերկրական ծովում ջրի մակարդակը նվազել է (գիտնականների գնահատմամբ անկումը կազմել է 1,5-ից 2 կիլոմետր), այնտեղ թափվող գետերը ողջ տարածաշրջանում սկսել են կտրուկ խորանալ լանդշաֆտի մեջ՝ հարմարվելով նոր պայմաններին: Միաժամանակ տեկտոնական ուժերը թեքել են Անատոլիական սալի որոշ հատվածներ և ակտիվացրել հին խզվածքները: Սա կտրուկ արագացրել է հողի էրոզիան:

Գիտնականները եկել են այն եզրակացության, որ այս դեֆորմացիաների պատճառով Անատոլիայի

բարձրլեռնային շրջանների հսկայական լճերն ինչ-որ պահի ակնթարթորեն ճեղքել են իրենց բնական պատնեշները: Սա առաջացրել է վիթխարի աղետալի ջրհեղեղներ: Այս սուպեր-վարարումների վկայությունն են երկու զանգվածային երկրաբանական գոյացություններ՝ Հանդերեի (Handere) և Նահր-Մենաշեի (Nahr Menashe) նստվածքները:

Հաջորդած տեկտոնական ակտիվությունը, որը տևել է միլիոնավոր տարիներ, աստիճանաբար տեղաշարժել է Պալեո-Մուրատի և Պալեո-Կարասուի հուները միմյանց ընդառաջ, մինչև որ մոտ 1,6 միլիոն տարի առաջ դրանք վերջնականապես միավորվեցին՝ ստեղծելով այն Եփրատը, որը մարդկությունը ճանաչում է աստվածաշնչյան տեքստերից և պատմական տարեգրություններից:

NEWS.am, 3.06.2026

Գիրություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Էլ. հասցեն՝ armine.pet21@mail.ru
Ստորագրված է տպագրության՝ 28.07.2026 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: